2022, ՀՈՒՆԻՍ Ա, ԹԻՎ 11 (607)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

2 հունիսի

Հունաստանի ազգային պաշտպանության փոխնախարարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց աշխատանքային այցով Հայաստան ժամանած Հունաստանի Հանրապետության ազգային պաշտպանության փոխնախարար Նիկոս Հարդալիասին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ-ի ՊՆ-ի փոխնախարար Կարեն Բրուտյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գոհունակությունը հայտնեց երկու երկրների ռազմական գերատեսչությունների միջեւ ձեւավորված սերտ փոխգործակցության առնչությամբ: Անդրադարձ կատարելով տարածաշրջանում տիրող բարդ իրավիճակին՝ Նորին Սրբությունն իր մտահոգությունն արտահայտեց Հայաստանի եւ Արցախի նկատմամբ Ադրբեջանի ոտնձգությունների եւ չդադարող սպառնալիքների առնչությամբ: Այս առիթով Հայոց Հովվապետը վստահություն հայտնեց, որ ՀՀ-ի զինված ուժերը կկարողանան ոգի եւ կամք դրսեւորել՝ կանխելու Ադրբեջանի ռազմատենչ նկրտումները: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս պրն Նիկոս Հարդալիասի, իր երախտագիտությունը հայտնեց Հունաստանի իշխանություններին եւ ժողովրդին՝ արցախյան պատերազմի ծանր օրերին Հայաստանին ցուցաբերած եղբայրական զորակցության եւ աջակցության համար: Հունաստանի ազգային պաշտպանության փոխնախարարը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը ջերմ ընդունելության համար, ընդգծեց, որ հայ եւ հույն ժողովուրդների բարեկամությունը գալիս է դարերի խորքից: Տիար Նիկոս Հարդալիասը, անդրադառնալով հայ-հունական ռազմական համագործակցությանը, նշեց, որ Հունաստանի պաշտպանության նախարարությունը պատրաստակամ է ամեն ջանք ներդնելու այն առավել խորացնելու համար եւ աջակցելու Հայաստանին առկա մարտահրավերների հաղթահարման գործում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց միջեկեղեցական փոխհարաբերություններին: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Աթենքի ու Համայն Հունաստանի Հիերոնիմոս Երկրորդ Արքեպիսկոպոսին:

Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Աստծու ամենախնամ Աջի պահպանության ներքո հայ-հունական հարաբերություններն արդյունավորվեն նորանոր իրագործումներով՝ ի նպաստ եղբայրական երկու ժողովուրդների բարօր ու խաղաղ կյանքի:

4 հունիսի

«Մարդու իրավունքներ եւ պատասխանատվություն. պատերազմի հետեւանքները» միջազգային համաժողովի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ճշմարտության եւ արդարադատության կենտրոնի» կողմից կազմակերպված «Մարդու իրավունքներ եւ պատասխանատվություն. պատերազմի հետեւանքները» առաջին միջազգային համաժողովի մասնակիցներին:

Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ «Ճշմարտության եւ արդարադատության կենտրոնի» նախագահ Գոռ Մնացականյանը տեղեկացրեց, որ Հայաստան են ժամանել իրավաբաններ եւ միջազգային իրավունքի առաջատար փորձագետներ 16 երկրից՝ քննարկելու 44-օրյա պատերազմի արդյունքում արցախահայության, ռազմագերիների, տեղահանված անձանց իրավունքների ոտնահարումներին եւ միջազգային արդարադատությանն առնչվող խնդիրները:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, ընդգծելով միջազգային գիտաժողովի կարեւորությունը հատկապես հայ ժողովրդի համար այս դժվարին ժամանակներում, հույս հայտնեց, որ իրավաբաններն ու միջազգային իրավունքի առաջատար փորձագետները հաղորդ կդառնան Հայաստանի ու Արցախի առջեւ ծառացած մարտահրավերներին եւ միջազգային հարթակներում կպաշտպանեն հայ ժողովրդի արդար իրավունքները:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաեւ արցախյան 44-օրյա պատերազմին եւ դրա հետեւանքներին, գերիների վերադարձման խնդրին, Ադրբեջանի կողմից տարվող հայատյաց քաղաքականությանը, որն ուղղված է ոչ միայն արցախահայության, այլեւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված համամարդկային նշանակություն ունեցող կրոնական, հոգեւոր-մշակութային կոթողների դեմ:

Հայոց Հովվապետը նաեւ իր գնահատանքը փոխանցեց գիտաժողովի կազմակերպիչներին եւ մասնակիցներին նման կարեւոր նախաձեռնություն դրսեւորելու համար՝ փորձելով նպաստել հետպատերազմյան դժվարությունների հաղթահարմանը:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը պատասխանեց նաեւ հյուրերի հարցերին, որոնք առնչվում են հայկական հոգեւոր արժեքների պահպանությանը եւ այդ ուղղությամբ Մայր Աթոռի կողմից իրականացվող աշխատանքներին:

9 հունիսի

Վենետիկի հանձնաժողովի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախագահ Կլեր Բազի-Մալորին՝ ուղեկցությամբ ՀՀ-ի Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի:

Հանդիպման սկզբում պրն Դիլանյանը Նորին Սրբությանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության ՍԴ-ի եւ Վենետիկի հանձնաժողովի միջեւ ձեւավորված ջերմ ու գործակցային հարաբերությունները՝ հույս հայտնելով, որ այս այցը նոր զարկ կհաղորդի այդ համագործակցությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գոհունակությունը հայտնեց ՀՀ-ի դատաիրավական համակարգի եւ Վենետիկի հանձնաժողովի միջեւ առկա սերտ գործակցության եւ այն առավել արդյունավորելու ուղղությամբ ներդրվող ջանքերի համար եւ իր գնահատանքը բերեց հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվող աջակցության ու անհրաժեշտ խորհրդատվության համար: ➥ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Վենետիկի հանձնաժողովի նախագահին

↩ էջ 1

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ արցախյան 44-օրյա պատերազմի հետեւանքներին, գերիների վերադարձման հարցին, Արցախի ժողովրդի անվտանգության խնդրին եւ ոտնահարված իրավունքներին, ինչպես նաեւ Ադրբեջանի կողմից տարվող հայատյաց քաղաքականությանը, Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության նկատմամբ ոտնձգություններին:

Իր հերթին Վենետիկի հանձնաժողովի նախագահ Կլեր Բազի-Մալորին նշեց, որ ՀՀ-ի ՍԴ-ի եւ Վենետիկի հանձնաժողովի միջեւ առկա փոխըմբռնման ոգին էլ ավելի կնպաստի երկու կառույցների հարաբերությունների խորացմանը:

Զրույցի ընթացքում կարեւորվեց նաեւ եկեղեցու առաքելությունը մարդու իրավունքների եւ արդարության պաշտպանության գործում:

Գեղարքունիքի մարզի համայնքապետերին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ի Գեղարքունիքի մարզպետ տիար Կարեն Սարգսյանին, մարզի համայնքապետերին, մարզում սպասավորող հոգեւորականներին՝ առաջնորդությամբ Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Պարթեւ վրդ. Բարսեղյանի:

Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հայր սուրբը, Նորին Սրբությանը ներկայացնելով հյուրերին, իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին թեմի հանդեպ ցուցաբերվող հայրական հոգատարության համար:

Հայոց Հովվապետը, իր հայրական օրհնությունը փոխանցելով հյուրերին, գոհունակություն հայտնեց թեմի ու մարզի միջեւ հաստատված արդյունավետ համագործակցության համար, որը, ըստ Նորին Սրբության, պիտի նպաստի մարզի շենացմանն ու ազգաբնակչության բարօրությանը, հետպատերազմյան մարտահրավերների հաղթահարմանը եւ ծառացած խնդիրների լուծմանը:

Այս առիթով Ամենայն Հայոց Հայրապետն իր մասնավոր գնահատանքը բերեց առաջնորդական տեղապահին՝ իրականացրած աշխատանքների եւ նվիրյալ ծառայության համար:

Իր հերթին Գեղարքունիքի մարզպետ տիար Կարեն Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին ջերմ ընդունելության համար, գնահատեց թեմի հոգեւորականների գործունեությունը՝ ուղղված մարզի բնակչության հոգեւոր կյանքի ամրապնդմանն ու առկա դժվարությունների հաղթահարմանը:

10 հունիսի

Ֆրանսիայի Ալֆովիլ քաղաքի հայկական դպրոցի աշակերտներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Ալֆովիլ քաղաքի Սուրբ Մեսրոպ հայկական դպրոցի շուրջ 40 աշակերտների:

Դպրոցի տնօրեն տիկին Նորա Թաշճյանը, հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, տեղեկություններ փոխանցեց դպրոցի ստեղծման պատմության, իրականացվող ծրագրերի եւ եկեղեցի–դպրոց փոխգործակցության մասին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով աշակերտներին, գոհունակությամբ արձանագրեց, որ գեղեցիկ ավանդույթ է դարձել Ֆրանսիայի մեջ գործող հայկական դպրոցների ու վարժարանների սաների այցելությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Նորին Սրբությունը հանդիպման ընթացքում հորդորեց դպրոցի սաներին Հայաստանից ստացած տպավորություններով կերտված տեսիլքով շարունակել ուսումնառությունը եւ իրենց նպաստը բերել հայրենիքի զորացմանն ու շենացմանը:

Հայոց Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց դպրոցի տնօրենությանը, ուսուցչական անձնակազմին եւ հոգաբարձուներին՝ Հայաստան եւ Մայր Աթոռ այցելություններ կազմակերպելու համար՝ մաղթելով արգասաբեր իրագործումների շարունակականություն եւ բարի տեսլականների իրականացում:

Իրենց հերթին աշակերտները երաժշտական կատարումով հաճելի անակնկալ մատուցեցին Վեհափառ Հայրապետին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց դպրոցի աշակերտներին՝ նրանց ընծայելով սրբապատկերներ եւ խաչեր:

Հայրապետական տնօրինություն

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ սույն թվականի հունիսի 1-ից Վրաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Կիրակոս վրդ. Դավթյանը նշանակվել է Վրաստանի հայոց թեմի առաջնորդ:

Տոնախմբվեց Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակը

Հունիսի 13-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակը: Տոնական այդ օրը նաեւ Սուրբ Հռիփսիմե վանքի ուխտի օրն է:

Առավոտյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եկեղեցականների թափորը, հավատացյալները, Էջմիածնի հայորդյաց տան սաների թմբուկների զարկերի ներքո, շարժվեցին դեպի Ս. Հռիփսիմե վանք՝ տանելով սուրբ Հռիփսիմեի մասունքները: Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամարի առջեւ Ամենայն Հայոց Հայրապետը, սրբազան Աջով օրհնելով հոգեւոր դասին եւ ներկա բարեպաշտ ժողովրդին, այն փոխանցեց Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանին: Ս. Հռիփսիմե վանքի առջեւ վանքի հոգեւոր սպասավորները եւ տարբեր վայրերից ժամանած բազում ուխտավորներ դիմավորեցին թափորը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանի գլխավորությամբ:

Տոնի առիթով վանքում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Անդրանիկ վրդ. Գեւորգյանը:

Հայր սուրբը, անդրադառնալով օրվա խորհրդին, հորդորեց հավատավոր ժողովրդին ս. Հռիփսիմեի բարեխոսությամբ աղոթքով հայցել Աստծուն հայրենի երկրի խաղաղության համար: «Թող սուրբ կույսի օրհնությունը մեզ ամենքիս վրա լինի, որպեսզի նույն ոգով, նույն անդրդվելիությամբ կարողանանք դիմակայել ու հաղթահարել մեր հայրենի երկրին պատահած փորձությունները, եւ մեր Տիրոջ պարգեւած ամեն մի գալիք օրն ապրենք քրիստոնեավայել կենցաղավարությամբ ու հայրենիքը շենացնենք նախանձախնդիր ոգով»,– եզրափակեց հայր Անդրանիկը:

Պատարագի ավարտին, հանդիսապետությամբ Արտակ եպս Տիգրանյանի, սրբուհու մասունքակիր Աջով կատարվեց հավատացյալների օրհնություն եւ Անդաստանի կարգ:

Վարդապետական թեզի պաշտպանություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Հունիսի 8-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ վարդապետական թեզի բանավոր պաշտպանություն:

Վարդապետական աստիճան ստանալու համար թեզ պաշտպանեց Կ. Պոլսի հայոց պատրիարքության միաբան Հարություն աբղ. Տամատյանը՝ «Կ. Պոլսո պատրիարքության վանական/դպրեվանական կյանքը» թեմայով:

Հանձնաժողովը նախագահում էր Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված էին նաեւ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս Պռոշյանն ու Մասյացոտն թեմի առաջնորդ Գեւորգ եպս Սարոյանը:

Պաշտպանության ընթացքում հայր սուրբը ներկայացրեց իր վարդապետական թեզը, պատասխանեց հանձնաժողովի անդամների ու ներկաների հարցերին:

Քննիչ հանձնախումբը դրական եզրակացություն տվեց վարդապետական թեզի պաշտպանությանը եւ արժանի համարեց Հարություն աբղ. Տամատյանին շնորհելու մասնավոր վարդապետության աստիճան: Օրեր անց, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական բարձր տնօրինությամբ, ձեւավորված ավանդության համաձայն, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում կատարվեց մասնավոր վարդապետական աստիճանի տվչության հատուկ արարողություն:

Տոնախմբվեց Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակը

Հունիսի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց Ս. Գայանյանց կույսերի հիշատակը:

Առավոտյան Մայր Աթոռից եկեղեցականների հանդիսավոր թափորը Էջմիածնի հայորդյաց տան սաների թմբուկների զարկերի ներքո առաջնորդվեց Ս. Գայանե վանք: Թափորը մինչեւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամար գլխավորեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մասունքն ամփոփող Աջով օրհնելով բարեպաշտ ժողովրդին: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը մասունքակիր Աջը փոխանցեց լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանին:

Ս. Գայանե վանքի առջեւ թափորը դիմավորեցին վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը, վանքի հոգեւոր սպասավորներն ու բազմաթիվ հավատավոր հայորդիներ:

Ս. Գայանե վանքում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Ս. Գայանե վանքի վանահայր Մատթեոս վրդ. Պողոսյանը:

Իր քարոզում հայր սուրբն անդրադարձավ Գայանյանց կույսերի կյանքին եւ նահատակության պատմությանը.

«Հռիփսիմյանց ու Գայանյանց նահատակությամբ եւ Միածնի էջքով հայոց երկիրն ու ժողովուրդը դարձան Աստծու ընտրյալը»,– ասաց հայր Մատթեոսը՝ հորդորելով հավատացյալ ժողովրդին մշտապես հայցել սուրբ Գայանյանց եւ Հռիփսիմյանց բարեխոսությունն առ Աստված, որպեսզի Տերը միշտ պահապան լինի մեր երկրին ու ժողովրդին, եւ Քրիստոսի բարեբեր խաղաղությունն իջնի աշխարհի վրա:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի



Հոգեգալստեան «Ամէն. ալէլուիա»-ն Սեւանի մէջ

Բնութեամբ եւ հոգեւորով այսքան գիրկընդխառնուած Սեւանի թերակղզին Հոգեգալստեան տօնին յատուկ ոգեւորութեամբ կը շրջապատուի, քանի Ս. Յարութեան յաջորդող յիսուներորդ օրը՝ Հոգեգալուստը, այս օրհնեալ համալիրի տարեկան տօնախմբութեան կը զուգադիպի: Հոգեգալուստը, ըլլալով քրիստոնէական եկեղեցւոյ կարեւորագոյն տօներէն մին, արդէն իսկ կարող է եկեղեցիները տօնական տրամադրութեամբ օժտելու, Ս. Հոգին Աստուծոյ առաքելներու դասու վրայ հանգչելու աստուածաշնչական աւետիսով: Իսկ Սեւանի ծովահայեաց վանական համալիրը կրկնակի խանդավառութեամբ կը պարուրուի, երբ ուխտաւորներ կը փութան դէպի Սեւան՝ թէ՛ Հոգեգալուստը տօնելու համար այս խորհրդաւոր սրբավայրին մէջ եւ թէ՛ տարեկան ուխտագնացութեան առթիւ յատուկ ուխտի աղօթքներ մատուցանելու առ Աստուած բարեխօսութեամբ սուրբ առաքելոց: Ուստի նախ տօնական Ս. Պատարագ կը մատուցուի ամենայն հանդիսաւորութեամբ, եւ ապա՝ վանքի բակը տեղի կ'ունենայ Անդաստանի արարողութիւնը:

Ս. Էջմիածնէն դէպի Սեւան փոխադրուած մասունքը

Սեւանի տօնախմբութեան առթիւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գանձատունէն դուրս կը բերուի Ս. Առաքելոց մասունքակիր պահարանը, որպէսզի հաւատացեալներ մօտենան մասունքին եւ օրհնութիւն ստանան ըստ իրենց հաւատքին: Այս տրամադրութեամբ ստացայ շղարշազարդ պահարանը եւ Ս. Էջմիածնի Մայր տաճարին առջեւ համբուրելէ յետոյ մասունքը՝ ուղղուեցայ դէպի Սեւանավանք՝ որպէս ճանապարհորդակից ունենալով հայր Զատիկ վարդապետը: Մօտաւորապէս մէկուկէս ժամուայ ճանապարհէն յետոյ հասանք Սեւանի Վազգէնեան ճեմարանը, ուր դիմաւորուեցանք ճեմարանի փոխտեսուչ եւ Սեւանավանքի վանահայր տէր Մինաս քահանայի եւ երէցկնոջ կողմէ:

Վերջին անգամ ձմրան շրջանին ներկայ եղած էի Սեւանի մէջ՝ ջերմ հիւրընկալութեամբ տեսուչ հայր Երէմիա վարդապետի, եւ ամէն տեղ ձիւնազարդ էր ու բնութիւնը՝ հագած իր սպիտակ զգեստը: Սենեակէս կը տեսնէի դուրսը՝ հանդերձ մատուռով ու շրջակայ համալիրով, ուր իշխող էր ձիւնը: Ներկայիս ալ, որպէս համալիր եւ աղօթատեղի, ամէն ինչ տեղին էր, աչքառու տեսքով: Սակայն այս անգամ շրջանը բոլորովին տարբեր էր՝ ծաղիկներով ու խոտերով, քանի գարունը եկած ըլլալուն՝ արդէն իսկ զգալիօրէն ծիլեր արձակուիլ սկսած էին: Սպիտակ բնութիւնը արդէն իսկ իր զարթօնքը կ'ապրէր. ամէն տեղ դալարապատ դարձած էր: Կարծէք՝ կարճ ժամանակի մէջ գաղտնի ձեռք մը, ի ձեռին ունենալով վրձին մը, բոլորովին կանանչով գունազարդած ըլլար ամէն տեղ: Հանուր ճանապարհորդութեան ընթացքին այս իրողութեան վրայ կեդրոնացած էի, եւ Սեւանի շքեղ տեսքն անգամ մը եւս հրաւիրեց զիս դալարապատ ու կենդանի բնութեան մէջ կրկնելու սաղմոսաց փառաբանչական տողերը, վասն զի արարողութիւնը գեղատեսիլ բնութեան մէջ առաւել եւս պիտի իմաստաւորուէր. «Անոր ձեռքին մէջ են երկրի խորունկ տեղերը, ու լեռներուն բարձրութիւնները անորն են: Իրն է ծովը, ու ինք շինեց զանիկա, եւ իր ձեռքերը ստեղծեցին ցամաքը: Եկէք, երկրպագութիւն ընենք ու ծռինք. ծունկ կրկնենք մեզ ստեղծող Տէրը առջեւ» (Սղմ. Ղե 4–6):

Հանդիսաւոր թափոր դէպի Ս. Առաքելոց եկեղեցի

Օրուան խորհուրդի հանդիսաւորութեան համապատասխան Վազգէնեան ճեմարանի մայր մուտքէն դէպի Ս. Առաքելոց հանդիսաւոր թափոր պէտք է կազմուէր: Նախքան ս. Պատարագը կատարելի այս խորհրդաւոր ծիսակատարութիւնը, չէի գիտեր, որ այսքան տպաւորութիւն պիտի թողուր ուխտաւորներու վրայ: Տէր Մինաս քահանան ի ձեռին ունէր մասունքակիր պահարանը, եւ իր կողքին խաչով ու Աւետարանով վեղարաւորներս կանգնած էինք: Մեր առջեւը կը գտնուէին, իրենց գեղեցիկ դպրական շապիկներով ճեմարանականներ, որոնք խաչով, խաչվառով եւ զարդեղանքով կ'առաջնորդէին մեզ: ➥ էջ 5, 7

Ներսես Շնորհալու ստեղծագործութիւնների մանկավարժական բնույթը

«Վիպասանութիւն պոեմը»՝ որպես հայ ժողովրդի պատմության դասագիրք

Սկիզբը՝ թիվ 9–10

«Վիպասանութիւնը» կառուցվածքային առումով կազմված է նախերգանքից, բուն նյութից, հիշատակարանից, որը վերջերգի դեր է կատարում: Շնորհալին համեմատաբար փոքր ծավալի մեջ խտացրել է հայ ժողովրդի պատմությունը՝ «յառաջին մարդոյն սկսեալ» մինչեւ «ի մերս հասուցեալ»: Նախերգանքն ունի ծրագրային նշանակություն. հեղինակն այստեղ խոսում է իր երկի ստեղծման նպատակի, ստեղծագործական գլխավոր մեթոդների մասին: Շնորհալին ունի սերունդների կապի պահպանման, հետեւաբար նրանց ավանդների շարունակման հստակ գիտակցություն, ինչը նաեւ սովորեցնում է ընթերցողին. որդին պարտական է հորը եւ պետք է հատուցի նրա վարձը (*Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 30: Այսուհետ այս գրքից կատարված մեջբերումների պարագայում կնշվի միայն էջը*).

Պարտապան հօրն է որդի
Հատուցանել վարձ ծնօղի...

Երկում առկա թերացումները, պակասությունները հեղինակը վերագրում է իր երիտասարդ հասակին եւ թերի կրթությանը, իսկ որպես բարձրագույն կրթության չափանիշ՝ բերվում է հելլենական կրթության օրինակը: Շնորհալին նշում է, որ ինքը տակավին հմուտ չէ գիտությունների մեջ, չի ստացել հելլենական կրթություն, չի կրթվել Աթենքում, ուր Պլատոնի ճեմարանն է, չի սովորել հոմերոսյան բանաստեղծական արվեստը եւ Արիստոտելի տասը ստորոգությունները (կատեգորիաները), չի ուսումնասիրել բանաստեղծական խոսքի քերթման, այսինքն՝ ստեղծման արվեստը: Այս առիթով մի շատ կարեւոր ու հետաքրքիր դիտարկում է անում Հրանտ Թամրազյանը. Շնորհալու՝ նախերգանքում տրված ինքնաբնութագրումները, սեփական պակասությունների մատնանշումը նա համարում է ոչ միայն ինքն իրեն, այլեւ ժամանակի բանաստեղծին առաջադրած պայմաններ. «Ուրեմն, նա, թեեւ խոստովանում է իր թերությունները, սակայն հենց դրանով շատ բարդ եւ բազմակողմանի գործ է համարում բանաստեղծական երկի ստեղծումը: Բանաստեղծը պետք է ունենա կրթություն, գիտություն, իմանա իմաստասիրություն եւ տաղաչափություն, ճարտասանություն եւ քերականություն, խոսքի հղկման եւ ստեղծման գաղտնիքներ» (*Հ. Թամրազյան, Հայ քննադատություն, գիրք Բ, Երեւան, 1985, էջ 306*):

Ապա Շնորհալին գրում է իր երկի ստեղծման նպատակի մասին: Դեռեւս այդչափ երիտասարդ տարիքում նա լավ է գիտակցել, որ բանաստեղծությունն ունի դաստիարակչական մեծ արժեք, հասկացել, որ օրինակի միջոցով սովորեցնելն ավելի արդյունավետ կլինի: Այս մոտեցմամբ էլ Շնորհալին ձգտում է փառաբանել նախնիների քաջությունը եւ լավ գործերը եւ, ընդհակառակը, պախարակել ոմանց անբարի արարքները, վատ համբավն ու անունը (էջ 34).

Զոմանց պատմել յոյժ գովելի
Զարիութիւնսն պանծալի,
Զոմանց ճառել զգործս անբարի
Եւ զվատ անունս յաշխարհի:
Զի որ բարւոյն է բաղձալի,
Առ ի բարեաց նախանձ շարժի,
Եւ որ չարին խնամ տանի,
Յօրինակաց աստ կշտամբի:

➥ էջ 8

Չարենցյան հետքերով

Էսսեի փոխարեն՝ գրված Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակի առթիվ

Սկիզբը՝ թիվ 9

Չենք կարող չանդրադառնալ նաեւ մեկ այլ իրողության: Կամավորական ջոկատներն իրենց ռազմական պատրաստականությունն անցկացրել են եկեղեցուց մոտ երկու կմ հեռավորության վրա գտնվող Պլանտաժներ (ըստ երեւույթին՝ ռուսերեն ճուռդաժ (խրամատներ) բառից) վայրում, քանի որ հենց այդ տեղանքին անմիջապես կից գտնվել է ցարական բանակի զորագունդը, որի համար եւ այն ծառայել է որպես ուսումնական կրակատեղի: Այդ զորագունդն այնքան մեծ է եղել, որ զինվորների, սպաների ու նրանց ընտանիքի անդամների համար 1912-ին առանձին եկեղեցի է կառուցվել Քանաքեռում, որն այժմ գործող եկեղեցի է: Վերոհիշյալ ամայի այդ տեղանքում (այժմյան բուսաբանական այգուն մոտ՝ Ծարավ աղբյուր փողոցի հարակից հատվածում) 1915-ին հայկական կամավորական գնդերի ռազմափորձերի ստուգումներն անցկացնող (*այդ մասին տես Վ. Ահարոնյան, Անդրանիկ. մարդը եւ ռազմիկը, Երեւան, 2019, էջ 66, 69*) զորավար Անդրանիկի, Դրոյի, Աշո (Արշավիր) Շահխաթունու (Կ. Պոլսի հայտնի դերասաններից էր, իսկ այդ օրերին՝ Քանաքեռում բացված սպայական դպրոցի ղեկավարներից մեկը, իսկ հետո՝ Առաջին Հանրապետության շրջանում, Երեւան քաղաքի ռազմական պարետը դարձավ: Նրա հերոսական կյանքը հետագայում տխուր, ողբերգական ընթացք ունեցավ. Շահխաթունին 1920-ին՝ բոլշեւիկների մուտքից հետո, հեռացավ Փարիզ եւ այնտեղ մահացավ հիվանդության ու քաղցի պատճառով՝ միայնության մեջ: Նրա կերպարն անհուն գորովով է կերտել Կոստան Զարյանն իր «Նավը լեռան վրա» վեպում), Վարդգես Ահարոնյանի եւ էլի մի շարք բարձրաստիճան զինվորականների պատվին կազմակերպվել է հյուրասիրություն պապիս՝ մորս հոր՝ Կոստանդենց Արտուշի տանը, որը գյուղի երեք-չորս ունեւորներից մեկն էր, եւ որին 1937-ին որպես կուլակի՝ իր որդու՝ Իսահակի (նա նորածին երկու երեխաների հայր էր) հետ աքսորեցին եւ անհայտության մեջ գնդակահարեցին: Մեղադրանքներից մեկն էլ Անդրանիկին իր տուն ընդունելն էր:

Քանաքեռում բանակատեղած 5-րդ եւ 6-րդ վերոհիշյալ գումարտակների հրամանատարն Իշխան Հովսեփ Արղությանն էր, որի զինվորներից մեկն էլ Եղիշե Սողոմոնյանն է եղել: Գրականագետ Գառնիկ Անանյանը Չարենցին նվիրված իր «Չարենցը պատերազմի վայրերում» հոդվածում նշում է նաեւ Չարենցի սանիտարական վաշտի համարը՝ Բ, Նասիլքա №III (*տես Չարենցյան ընթերցումներ, Երեւան, 1977, էջ 43*): Չարենցը եկել էր գտնելու իրեն ծվատող՝ «Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր // Կախվել մեր գլխին այսպես կուրորեն» (*Ե. Չարենց, Երկերի ժողովածու, Երեւան, 1963, էջ 17*) հարցի պատասխանը: Չարենցը, որ սկզբում հաշվառվել էր սանիտարական ջոկատում, իր դիմումի համաձայն, տեղափոխվել է մարտական ջոկատ եւ զենքը ձեռքին հասել միչեւ Վան՝ «Մեռած քաղաք», վիրավորվել ձեռքից: Պատերազմական այդ օրերը Չարենցի համար լեցուն են եղել նաեւ ստեղծագործական տքնության ժամերով: Այդ են վկայում «Դանթեական առասպել» պոեմը եւ նրա վերջում կատարված գրությունը. «1915–16, Տաճկաստան–Պարսկաստան, ռազմաճակատ» (*տես Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երեւան, 1955, էջ 12),* որը նշանակում է, որ շատ պատկերներ ուղղակի տեսածի եւ ապրածի արդյունք են՝ թուրք ջարդարարների գործունեության հետեւանք-իրողություններ, սահմռկեցուցիչ իրականություն՝ անթաղ ու սառած դիակներ, մորթոտված ծերեր ու երեխաներ:

Չարենցը ռազմի դաշտ գնացող իր նմանների պես ուխտել էր «Լինել գթասիրտ, ու հպարտ, ու մեծ»: Գթասրտություն, որի մի ակունքն էլ բխում էր ռազմիկներին ուղղված զինվորական հրամանատարության հրահանգներից՝ քնքուշ լինել դեպի թշնամու երեխան, եւ ասպետ՝ դեպի նրա կինը. «....Զինվոր, դու քո զենքը, պատիվը բարձր պիտի պահես»,– ասվում էր այդ փաստաթղթում (*տես ՊԿՊԱ, Ֆ. 121, ց. 1, գ. 12, թ. 104*):

Չարենցը լցված էր նաեւ «առավոտ ծեգի» կապույտ տեսիլներով ու լավատեսությամբ՝ կարծելով, թե կռվի դաշտերում գտնելու է իր երկրի «դեմքը լուսե», բայց գտավ միայն «դիակներ փայտե» (Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երեւան, 1955, էջ 47).

Հրացան: Թնդանոթ: Ռումբեր:
Մահ:
Մահ:
Մահ:
Ընդհանուր, հանուր:
Զինվորի, աղջկա, հարսի:–

Ես կարծում էի – այնտեղ,
Ռումբերի ահեղ որոտում
Կգտնեմ քո դեմքը լուսե:
Բայց գտա... դիակներ փայտե:

Այս ամենը նաեւ նկատի ուներ գրականագետ Սուրեն Աղաբաբյանը, երբ իրավացիորեն գրում էր. «Բանաստեղծը տեսավ մարդկային տառապանքի անհուն ծովը, ժողովրդի անծայր աղետը եւ դրա կոնկրետ, ամենակոնկրետ արտահայտություններով ողողեց իր առասպելապատումը» (*Ս. Աղաբաբյան, Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, Երեւան, 1986, էջ 242*):

Նույն *աղետից* էր, որ Չարենցին «գորշ էր թվում աշխարհը ամբողջ», «մենք՝ զոհ, մենք՝ դահիճ՝ ուրիշի ձեռքում», բայց մյուս կողմից՝ նա համոզված մնաց, որ պետք էր «քայլել ու քայլել համառ»՝ «ապրելու հսկա տենչը բեռ առած», որ ժպտար, ժպտար «երկիրը տրտում», «երկիրը ցավի, սուգի, արյունի» (*տես Ե. Չարենց, Երկերի ժողովածու, Երեւան, 1963, էջ 29, 35, 36, 11*): Այսպես մինչեւ *իր կյանքի* վերջը՝ միշտ կամ գրեթե միշտ «անկումների սարսափներով» եւ «գանգրահեր գալիքի» սպասումներով լեցուն:

Չարենցի կյանքին առնչվող վերոհիշյալ երեք դրվագները ցույց են տալիս, որ մեծ բանաստեղծն արյան կանչով, մտքի նվիրումով ու ստեղծագործական առաջադրույթներով, գրական առաջին քայլերից սկսած, անքակտելիորեն կապված է եղել իր ժողովրդի ճակատագրին եւ այդպիսին էլ մնալու էր հետագայում՝ միշտ կրելով իր մեջ հայոց ճակատագրի ողջ կատակերգությունն ու ողբերգությունը՝ «գոս օրերի» շղթա՝ մերթ լեցուն նահիրյան «պայծառ գալիքի» սպասումներով, մերթ էլ՝ կործանարար հիասթափություններով, մանավանդ կյանքի վերջին շրջանում, ճիշտ եւ ճիշտ իր մեծ նախորդի՝ Խաչատուր Աբովյանի նման, որի կերպարն այնքան խորքային ու աներկբայորեն նույնացած էր իրենին (Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երեւան, 1955, էջ 250).

....Եվ այժմ, մենավոր
Նա գնում էր կրկին դեպի հեռուն այն լուրթ.
Դեպի լյառն անհաս ու վեհանիստ.–
Դեպի գագաթը բարձր, որ իր ժողովուրդը
Համարել է հավետ իր գոյության խորհուրդը,–
Որ ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ...

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆԻ ՍՈՒՐՈԺՍԿԻ. Հաղթել մահին նշանակում է խորությամբ ապրել



Մահվան հանդեպ իմ վերաբերմունքը յուրօրինակ է, եւ ես հիմա ուզում եմ բացատրել, թե ինչու եմ մահին ոչ միայն հանգիստ վերաբերվում, այլեւ՝ ցանկությամբ, հույսով, կարոտով:

Մահվանն առնչվող իմ առաջին վառ տպավորությունը հորս հետ ունեցած մեր զրույցն էր. նա մի անգամ ինձ ասաց. «Դու պետք է այնպե՛ս ապրես, սովորես այնպե՛ս սպասել մահվանդ, ինչպես փեսան է սպասում հարսնացուին. սպասել նրան, ցանկանալ նրան, նախապես հրճվանք ապրել այդ հանդիպումից եւ հանդիպել նրան ակնածանքով, քնքշանքով»:

Երկրորդ տպավորությունը (իհարկե ոչ անմիջապես, այլ որոշ ժամանակ անց) հորս մահն էր: Նա հանկարծակի մահացավ:

Ես այցելեցի նրան: Նա ապրում էր ֆրանսիական մի տան վերեւում գտնող աղքատիկ սենյակում, ուր կային ընդամենը մի մահճակալ, մի սեղան, մի աթոռ եւ մի քանի գիրք: Ես մտա նրա սենյակը, փակեցի դուռը եւ կանգ առա: Այնպիսի մի լռություն պատեց ինձ, այնպիսի խոր մի լռություն, որ հիշում եմ՝ բարձրաձայն արտաբերեցի. «Իսկ մարդիկ ասում են, թե մահ գոյություն ունի... Ինչպիսի՛ սուտ»:

Որովհետեւ այդ սենյակը գոգոթված էր կյանքով, այնպիսի մի լիարժեք կյանքով, որ նրանից դուրս՝ ո՛չ մի փողոցում, ո՛չ մի բակում երբեք չեմ հանդիպել: Ահա թե ինչու նման վերաբերմունք ունեմ մահվան հանդեպ եւ ինչու նման ուժգնությամբ եմ վերապրում Պողոս առաքյալի խոսքերը, թե՝ ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ, որովհետեւ քանի դեռ ապրում եմ մարմնով, բաժանված եմ Քրիստոսից...

Եվ հետո առաքյալն իր խոսքը շարունակում է, ինչն ինձ նույնպես խիստ զարմացնում է: Մեջբերումս ճշգրիտ չէ, բայց լսեք, թե ինչ է ասում նա. նա միանգամայն ուզում է մեռնել եւ միավորվել Քրիստոսին, բայց ավելացնում է. «Սակայն ձեզ պետք է, որ ես ողջ մնամ, եւ ես կշարունակեմ ապրել»: Դա վերջին զոհաբերումն է, որ կարող էր նա անել. այն ամենը, ինչ հույսեր էլ որ ուներ, ինչ որ անում էր, պատրաստ էր մի կողմ դնելու, որովհետեւ նա պետք էր ուրիշներին:

Ես 15 տարի բժիշկ եմ աշխատել, որից 5-ը՝ պատերազմում կամ ֆրանսիական դիմադրությունում: Դրանից հետո 46 տարի հոգեւորական եմ եղել եւ իրար հետեւից թաղել մեր նախկին վտարանդիների մի ողջ սերունդ: Այնպես որ մահ շատ եմ տեսել: Ինձ զարմացրել է, որ ռուսները հանգիստ են մեռնում. արեւմտյան մարդիկ ավելի շատ են վախենում մահից: Ռուսները հավատում են կյանքին եւ գնում են կյանք: Դա առաջին բանն է, որ ամեն մի հոգեւորական եւ ամեն մի մարդ պետք է կրկնեն իրենց համար եւ ուրիշների. պետք է պատրաստվել ոչ թե մահվանը, այլ հավիտենական կյանքին:

Մահվան մասին մենք ոչինչ չգիտենք: Մենք չգիտենք՝ ինչ է կատարվում մեզ հետ մահվան պահին, սակայն որոշակիորեն գիտենք, թե ինչ է հավիտենական կյանքը: Մեզանից յուրաքանչյուրն իր փորձառությունից գիտի, որ պահեր են լինում, երբ արդեն ապրում ես ոչ թե ներկա ժամանակի մեջ, այլ այնպիսի մի լիիրավ կյանքով, այնպիսի հրճվանքով, որն ամենեւին էլ երկրային չէ: Ուստի առաջինը, ինչը հարկ է սովորենք եւ սովորեցնենք ուրիշներին, ոչ թե նրանց մահվան պատրաստելն է, այլ կյանքին: Իսկ եթե խոսենք մահվան մասին, ապա պետք է խոսել նրա՝ որպես դուռ լինելու մասին, ինչը լայնորեն բացվում է եւ մեզ թույլ տալիս մտնել հավիտենական կյանք:

Սակայն, այնուամենայնիվ, մեռնելը հեշտ բան չէ: Ինչ էլ մտածելու լինենք մահվան մասին, հավիտենական կյանքի մասին, պետք է իմանանք, որ իրապես ոչինչ չգիտենք բուն մահվան ու մեռնելու մասին: Ես ուզում եմ մի օրինակ բերել պատերազմական օրերի իմ փորձից:

Ես կրտսեր վիրաբույժ էի ռազմաճակատային հոսպիտալում. մահանում էր մի երիտասարդ զինվոր, նա 25 տարեկան էր՝ իմ տարիքի: Երեկոյան մտա նրա մոտ, նստեցի կողքին եւ հարցրի. «Հը, ո՞նց ես քեզ զգում»: Նա նայեց վրաս ու պատասխանեց. «Ես այս գիշեր մահանալու եմ»: «Դու վախենո՞ւմ ես մահից»: «Մահը սարսափելի չէ, ուղղակի ցավ եմ զգում, որ պիտի բաժանվեմ այն ամենից, ինչը սիրում եմ, օրինակ՝ երիտասարդ կնոջիցս, իմ գյուղից, ծնողներիցս: Սարսափելի է մենակ մահանալը, մահանալը՝ մենության մեջ»: «Դու մենության մեջ չես մահանա,– ասացի ես,– ես քո կողքին կլինեմ»: «Դուք չեք կարող ողջ գիշեր նստել իմ կողքին»: «Իհարկե, կարո՛ղ եմ»,– վստահեցրի: Նա մտածեց ու ասաց. «Եթե նույնիսկ նստեք կողքիս, ինչ-որ պահից ես դա չեմ կարող գիտակցել եւ դեպի խավարը կգնամ ու կմահանամ մեն-մենակ»: Ես ասացի նրան. «Ո՛չ, այդպես չէ: Ես կնստեմ քո կողքին, եւ մենք կզրուցենք: Դու ինձ կարող ես պատմել այն ամենի մասին, ինչ կամենում ես. կարող ես պատմել քո գյուղի մասին, ընտանիքիդ, կնոջդ, մի խոսքով՝ այն ամենի մասին, ինչը հիշում ես, ինչ կա հոգումդ, ինչը սիրում ես: Ես կբռնեմ քո ձեռքը, կամաց-կամաց դու կհոգնես խոսելուց, այդ ժամանակ ես կսկսեմ խոսել: Հետո, երբ կտեսնեմ, որ դու սկսում ես ննջել, ես կսկսեմ շշուկով խոսել: Դու կփակես աչքերդ, եւ ես կդադարեմ արդեն խոսել, բայց կբռնեմ ձեռքդ, իսկ դու մեկ-մեկ կսեղմես իմ ձեռքը՝ համոզվելու համար, որ կողքիդ եմ: Կամաց-կամաց քո ձեռքը, որ դեռ զգում է իմ ձեռքը, էլ չի կարողանա սեղմել իմ ձեռքը, այդ ժամ ես կսեղմեմ քո ձեռքը: Երբ ինչ-որ պահի դու արդեն մեզ հետ չես լինի, իմացիր՝ դու մենակ չես լինի: Այդ ողջ ճանապարհը մենք միասին կանցնենք»: Եվ այսպես՝ ժամ առ ժամ, մենք միասին անցկացրինք այդ գիշերը: Եվ ինչ-որ պահի նա իսկապես դադարեց սեղմել իմ ձեռքը, եւ ես սկսեցի սեղմել նրա ձեռքը, որպեսզի նա զգա, որ ես իր մոտ եմ: Հետո նրա ձեռքը սկսեց սառչել. նա ալեւս մեզ հետ չէր:

Դա շատ կարեւոր, շատ կարեւոր պահ է, որ մարդն իրեն մենակ չզգա ու մենակ չլինի, երբ գնում է հավերժություն:

Սակայն լինում են դեպքեր, երբ մարդը երկարատեւ է հիվանդ լինում: Սակայն երբ նա շրջապատված է սիրով, հոգատարությամբ, մահանալը թեթեւ է ընթանում, չնայած ցավալի է (այդ մասին եւս կխոսեմ): Բայց իսկապես սարսափելի է, երբ մեռնողը շրջապատված է մարդկանցով, որոնք միայն սպասում են, թե երբ է նա հոգին ավանդելու՝ արդարանալով, որ հիվանդի կողքին իրենք դարձել են նրա հիվանդության գերին. չեն կարողանում հեռանալ նրա մահճակալից, չեն կարողանում իրենց կյանքն ապրել, ուրախանալ իրենց ուրախություններով: Նա սեւ ամպի պես կախված է լինում նրանց գլխին, երազում են՝ երանի շուտ մեռնի... Իսկ մեռնողն զգում է դա: Դա կարող է ամիսներ ձգվել, երբ հարազատները մոտենում են եւ իմիջիայլոց հարցնում. «Հը, ո՞նց ես, ոչի՞նչ, քեզ ինչ-որ բան պե՞տք է, ոչինչ չե՞ս ուզում»: Եթե նույնիսկ ձայնի մեջ դաժանության երանգ չի հնչում, միեւնույն է, մարդը զգում է, որ իրեն այցելել են, որովհետեւ պետք է այցելեին, որովհետեւ նրանք անհամբեր սպասում են իր մահվանը:

Բայց հակառակն էլ է լինում: Մարդը մահանում է եւ մահանում է երկարատեւ մահով, սակայն նա սիրված է եւ թանկ: ➥ *էջ 6*

Ռաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպը

Լրանում է Դավիթ Բեկի սխրագործության 300 տարին: Այս երեք հարյուր տարվա ընթացքում մենք՝ որպես հայ ժողովուրդ, մեր ազգային ծրագրերի իրականացման ճանապարհին պարտական ենք նաեւ նրան: Այդ բարձր գիտակցությունը ժամանակին ոգեշնչեց Ռաֆֆուն՝ գրելու իր «Դավիթ Բեկ» պատմավեպը:

Ա.

Ռաֆֆին ռոմանտիկ էր, այլ կերպ՝ գաղափարապաշտ: Ազգային վերակայացման գաղափարաբանության նպատակով նա ստեղծեց սերունդներին գործնական օրինակ տվող հերոսներ: Դա թե պարսկահայության եւ կովկասահայության կյանքը նկարագրելիս («Սալբի», «Հարեմ», «Ոսկի աքաղաղ»), թե ծրագրային վեպերում («Զալալեդդին», «Խենթը», «Կայծեր») եւ թե պատմավեպերում («Դավիթ Բեկ», «Պարույր Հայկազն», «Սամվել»): Եվ, իրոք, Ռաֆֆու այս վեպերից ծնվեցին ոչ միայն ազգային հերոսներ, այլեւ ազգային կուսակցություններ ու գաղափարախոսություններ:

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը ազգային վերականգնումի նոր հույսեր էր ներշնչել հայ ժողովրդին: Ռաֆֆին այդ հույսերի արտահայտիչն էր: Դավիթ Բեկի կերպարը մարմնավորելու համար վիպասանը պատմական հիմքեր էր որոնում, իսկ միակ հիմքը Մխիթարյան միաբան Ղուկաս Սեբաստացու «Դաւիթ Բէգ կամ պատմութիւն մարտից Դափանցոց» աշխատությունն էր: Սեբաստացին իր հերթին օգտվել է Դավիթ Բեկի հետ ազատագրական սխրանքն իրականացրած իրական հերոսների պատմածներից, որպիսիք են Ստեփանոս Վրդանիսյան-Շահումյանը, քահանա Տեր Ավետիքը, նաեւ ուրիշներ: Ինքը՝ Ղուկաս Սեբաստացին, որ ավազանի ազգանունով Ստեփանյան էր, գրավոր հուշեր ուներ պատմական այդ իրադարձության մասին. ահա, իր հուշերի եւ նշված պատմությունների միավորմամբ 1736—1737 թթ. շարադրում է հիշյալ գիրքը: Այս ամենը նշանակում է, որ ամեն ինչ պատմականորեն վավերական է:

Սեբաստացու աշխատության հիմամբ ստեղծվել է նաեւ Աբգար Գուլամիրյանի խմբագրած «Դաւիթ Բէգ. Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին եւ պատերազմացն հայոցն Խափանու, որք եղեն ընդդեմ թուրքաց...» տարբերակը, որը Վաղարշապատում լույս է տեսել 1871 թ., ինչն էլ ծանոթ էր Ռաֆֆուն: Իսկ Սեբաստացու աշխատությունը, այսինքն՝ գրքի մայր օրինակը, Մխիթարյան միաբան Սամուել Արամյանի աշխատասիրությամբ լույս է տեսել շատ ավելի ուշ (Վենետիկ, 1978): Այդ հրատարակությունը նույն՝ 1978 եւ 1992 թվականներին Արշակ Մադոյանի փոխադրությամբ եւ առաջաբանով լույս տեսավ նաեւ արեւելահայերեն:

Վեպը գրելիս Ռաֆֆին մեծապես օգտվել է նաեւ իր ճամփորդական տպավորություններից, ձեռքի տակ է ունեցել պատմական այլ սկզբնաղբյուրներ (Եսայի Հասան-Ջալալյանց, Պետրոս Դի Սարգիս Գիլանենց, Միքայել Չամչյան, Ղուկաս Ինճիճյան):

1880 թվականին վեպն արդեն պատրաստ էր: «Մշակ»-ում տպագրվելու ընթացքում (1880—1882) նա նյութի հարստացման, բնաշխարհի, պատմական միջավայրի կենդանի պատկերման պահանջ է զգում, այդ իսկ նպատակով ընդհատում է տպագրությունը եւ 1881-ի հունիսի 25— հոկտեմբերի 30 ժամանակահատվածում ճանապարհորդում Մեծ Սյունիքում ու Փոքր Սյունիքում, այսինքն՝ Արցախում: Այդ ընթացքում ոտքի տակ է տալիս ամբողջ Արցախն ու Զանգեզուրը, տեսնում է Գանձակը, Սիսիանը, Բարգուշատը, Չավնդուրը, Կապանը, Մեղրին, Օրդուբադը, Նախիջեւանը... Հավաքում է փաստեր, հիշողություններ, ավանդազրույցներ, անում տարատեսակ գրառումներ...

Վերադարձին ապագա հրատարակության համար նախ վերախմբագրում է տպագրված էջերը եւ ապա նոր լիցք հաղորդում չտպագրված նախնական շարադրանքին: Սա արդեն Ռաֆֆու սխրանքն էր, որ պատմության չոր ու ցամաք թվերին ուզում էր ավելացնել կենսական միջավայր, պատմաաշխարհագրական տարածություն եւ պատմականորեն ներկա ժամանակ, քանի որ վիպական գործողությունները կատարվում են որպես կենդանի ընթացք եւ ոչ թե պատմվում: Այսինքն՝ պատմավեպը նրա համար ոչ միայն պատմության ժամանակագրություն էր, այլեւ մշակույթի պատմություն. ինչպես էին հագնվում, ինչպես էին հարաբերվում, ինչ կառուցվածք ունեին տները, ինչ կահավորում ունեին սենյակները, ինչ էր հայ ընտանիքը, ինչ էր հայ ժողովուրդ հասկացությունը, ինչ էին ուտում, կենցաղի ինչ առարկաներ էին գործածում, նաեւ ինչ ճանապարհներ ու հանգրվաններ, սարեր ու ձորեր կային: Այս ճանապարհորդությունը ոչ միայն հագեցրեց վեպի «ծարավը», այլեւ ծնունդ տվեց «Խամսայի մելիքությունները» (Թիֆլիս, 1882) աշխատությանը, որ Արցախի 1600—1827 թվականների պատմությունն է:

«Դավիթ Բեկ» վեպը «Մշակ»-ին զուգընթաց մաս-մաս տպագրվում է գրքով, երրորդ վերջին մասը գրքի տեսքով պատրաստ էր 1882-ի մարտին: Վեպի երեք մասը միասին՝ որպես առանձին գիրք, առաջին անգամ լույս է տեսել 1890-ին Թիֆլիսում: Վերնագրի տակ՝ «Պատմական վեպ (1722—1728)»:

Ռաֆֆու նպատակն ազգային զարթոնք բորբոքելն էր. ըստ Լեոյի՝ Կիլիկիայի անկումից հետո վերահառնումի առաջին կռվանը Սյունիքի ազգային-ազատագրական պատերազմն էր, որ սկսվեց 1722 թվականին, ավարտվեց 1725-ին՝ Դավիթ Բեկի իշխանության գալով,1727 թ.՝ Բեկի մահից հետո, վերսկսեց ու շարունակեց Մխիթար Սպարապետը, եւ 1730-ին ավարտվեց նրա մահվամբ:

Դավիթ Բեկի կենսագրական հարցեր կան,



որոնք դեռեւս քննարկվում են. ըստ այդմ՝ հոր անունը եղել է Աստվածատուր, պարսիկներն ասել են Ալահվերդի, ապրել է Տաթեւում: Չափահաս տարիքում Դավիթը գնացել է Հալիձոր՝ հորեղբայր մելիք Փարսադանի մոտ, որը եւ նրան տարել է Վրաստան: Վրաստանում անցել է զինվորական ծառայության, այնտեղից էլ եկել ու գլխավորել է հայրենիքի ազատագրական պայքարը: Ըստ որոշ աղբյուրների՝ Բեկն ունեցել է որդի՝ Մխիթար (տեր Սահակ) անունով: Կա նաեւ Դավիթ Բեկի՝ Սյունյաց երկրի այլ բնակավայրում ծնված լինելու վարկած: Ոմանք, այդ թվում նաեւ Ռաֆֆին, նրան սերում են Օրբելյանների տոհմից:

Այս ամենն այսպես՝ որպես պատմաբանների զբաղմունք, բայց մենք *կառաջնորդվենք Ռաֆֆու գրական կերպարի կենսապատումով* կերտված ըստ հավաստի աղբյուրների:

Բ

Վեպի գրական ճարտարապետությունն ի հայտ է բերում Ռաֆֆու վիպասանության ամբողջ վարպետությունը: ➥ *էջ 7*

Հոգեգալստեան «Ամէն. ալէլուիա»-ն Սեւանի մէջ

➥ *էջ 3*

Իսկ յետեւը կը գտնուէին ճեմարանի սաները՝ իրենց ճեմարանական հանդերձանքով, ու պատրաստ էին թափորի շարականները երգելու: «Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք» քարոզէն յետոյ ճեմարանականներ սկսան երգել Հոգեգալստեան պէսպիսի շարականներ. «Առաքելոյ Աղաւնոյ», «Աննիւթական Աղաւնի», «Օրհնութիւն ի Բարձունս», «Սարսափելի»...

Նման որակով թափոր մը, կարծեմ, երկար ժամանակէ ի վեր չէի տեսած, որ շարականներու երգեցողութեամբ բարձրանք թերակղզիի մը յատակէն դէպի բարձունքը ու հաւատացեալները օրհնենք մեր ի ձեռին ունեցած սրբութիւններով: Իմ այնքան սիրած շարականները ճեմարանի սաներու հետ երգելը այնքան մեծ խանդավառանք էր: Ծանրաշարժ քայլերով ընթացանք դէպի վեր ու երբ ժողովուրդին հանդիպեցանք, անոնք եւս համբուրեցին սրբութիւնները եւ միացան թափորին, ու այսպէս իւրաքանչիւր քայլափոխին թափորն առաւել եւս կը հսկայանար: Բնութեան մէջ գոչել Ս. Երրորդութիւնը եւ դաշտերուն մէջ օրհնութիւնը աղերսել մեր Արարչին եւ բնութեան Գեղազարդիչին:

Ուղղուեցանք, երգեցինք, օրհնեցինք, օրհնուեցանք եւ հասանք ի վերջոյ թերակղզիի բարձունքը եւ ահա Սեւանալճի հոգեզմայլ տեսքին ընդառաջ՝ թափորը կ'ուղղուէր դէպի Ս. Առաքելոց եկեղեցի: Շրջակայքը կային ոչ միայն հայ ուխտաւորներ, այլ օտար ուխտաւորներ, որոնք այս փառաշուք թափորով զմայլած էին: Երբ մուտք գործեցինք եկեղեցիէն ներս, արդէն իսկ հաւատացեալներ լեցուցած էին տաճարը: Անոնք եւս օրհնելէ յետոյ տէր հայրը մասունքը զետեղեց ծաղկազարդ պատուանդանի մը վրայ, եւ արտասանուեցաւ առաքելոց բարեխօսական աղօթք մը: Այլեւս պատրաստ ենք ս. Պատարագի...

Սեւանի այս համալիրը շատ առիթներով նմանցուցած եմ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ համալիրին, եւ այս թափորն առիթ եղաւ, որ անգամ մը եւս վերյիշեմ Աղթամար կղզիի նաւամատոյցէն դէպի եկեղեցի մեր ունեցած առաջին ճանապարհորդութիւնը՝ հանդերձ մեր ձեռքերուն մէջի նորաշէն ս. Սեղանի մասնիկներով:

Տօնական ս. Պատարագ

Ճեմարանականներէ կազմուած երգչախումբն արդէն իսկ պատրաստ էր Հոգեգալստեան տօնական Պատարագին առթիւ կոմիտասեան ու բազմաձայն «Խորհուրդ խորին» երգելու՝ առաջնորդութեամբ Վազգէն դպիրի: Գովելի դպրուհի մը եւս իր երգեհոնով կ'ընկերանար երգեցողութեան: Խումբը զուտ արական էր, սակայն անոնց յետին կը գտնուէին ուխտաւոր հայուհիներ, որոնք եւս իրենց կարգին կը մասնակցէին Պատարագի երգեցողութեան: Օրուան պատարագիչն էր Խորվիրապի վանքի վանահայր հայր Իսահակ վարդապետը: Այլապէս զանգերը ղօղանջեցին, եւ ներկայ ուխտաւորաց եւս ջերմեռանդութեամբ սկիզբ առաւ արարողութիւնը: Վազգէնեան ճեմարանի սաներն այս անգամ եւս լաւագոյնս պատրաստ էին կոմիտասեան երգեցողութիւնը կատարելու, իսկ այս անգամ իրենց գործն աւելի դժուար էր, քանի փոքր, սակայն խորհրդաւոր տաճարի մէջ ուխտաւորներու հոսքը կար: Մանուկներ, ընտանիքներ եւ մեծ ծնողք, բոլորը միատեղ արդէն իսկ կեդրոնացած էին արարողութեան: Իրենց մէջ հետաքրքրական էին մանկանց սիրուն կեցուածքը եւ տաճարի մէջի հանգստութիւնը: Նաեւ նշմարելի էին երկրպագուներուն բազմութիւնը, ծնկաչոք մատուցած աղօթքները:

Այս տրամադրութեամբ արդէն իսկ բոցաշունչ կը դառնայ սարկաւագաց եւ դպրաց երգեցողութիւնը, եւ օրուայ խորհուրդին համապատասխան՝ գեղաձայն սպասաւորաց ձայնը կը դառնայ սաստիկ հովու նման ներշնչողը՝ ներկայ հաւատացեալները: Այլապէս արարողութեան ընթացքին, ըստ Հայ Եկեղեցւոյ աւանդութեան, յետ «Առէք, կերէք»-ի երգուեցան Հոգեգալստեան շարականներ, եւ արտասանուեցան ս. Յովհան Ոսկեբերան հայրապետին «առ Հայր Աստուած», «առ Որդին Ս. Աստուած» եւ «առ Հոգին Ս. Աստուած» գրի առած յատուկ աղօթքները: Արտասանողը հոգեւորականն էր, եւ «Ամէն» բացագանչումով միացողը՝ հաւատացեալը: Քանիցս կրկնուեցաւ, որ կը հայցենք Ս. Հոգին Աստուծոյ ներշնչական զօրութիւնը, որով անհատներ կրնան հուրով մաքրուիլ եւ դառնալ հոգեպէս փայլող աննման ոսկեղէններ: Բոլոր հոգեւորականներս կարգաւ բարձրացանք ս. Խորան, համբուրեցինք ծաղկազարդեալ սրբազան մասունքը եւ արտասանեցինք աղօթքը:

Տէրունական աղօթքէն առաջ քարոզեց պատարագիչ հայր սուրբը եւ միացաւ ս. Յովհան Ոսկեբերանի աղօթական ոգւոյն եւ անդրադարձաւ Հոգեգալստեան դէպքի ազդեցութեան քրիստոնեայ աշխարհէն ներս եւ յիշեցուց, թէ առաքեալներ ինչպէս Ս. Հոգիով զօրացան ու դարձան Աւետարանի քարոզիչներ: Այս ուղղութեամբ շեշտեց, որ Ս. Հոգին կը գործէ մարդ արարածի կեանքէն ներս, որպէսզի մարդը կատարեալ իմաստով կարողանայ միանալ Աստուծոյ հետ եւ վերստին շարունակէ իր կեանքի նպատակին:

Անդաստան

Սեւանավանքի մէջ նախապէս եւս Պատարագի մասնակցած էի, եւ աշակերտաց ու հաւատացելոց ներքին տրամադրութիւնը որոշակի իմաստով ծանօթ էր ինծի: Սակայն արարողութեան յաջորդած «Անդաստան»-ի արարողութիւնը պիտի դառնար եզակի ապրումներու միջոցը, քանի Սեւանալճի ափին կատարելի արարողութեան մը առաջին անգամ մաս եւ բաժինը պիտի դառնայի: Ահա այս է պատճառը, որ յետ Պատարագի կատարուած այս արարողութիւնն առաւել եւս հոգածութեամբ ներկայացուի:

«Անդաստան»-ի արարողութեան մասին, երբ կը մտածեմ, եկեղեցական ծիսակատարութենէ առաջ հանճարեղ բանաստեղծ Դանիէլ Վարուժանի «Անդաստան» բանաստեղծութիւնը կը յիշեմ. «Արեւելեան կողմն աշխարհի Խաղաղութիւն թող ըլլայ... Արեւմտեան կողմն աշխարհի Բերրիութիւն թող ըլլայ... Հիւսիսային կողմն աշխարհի Առատութիւն թող ըլլայ... Հարաւային կողմն աշխարհի Պտղաբերում թող ըլլայ...»: Անդաստանը բառացի իմաստով կը յիշեցնէ նախ եւ առաջ հողն ու երկիրը: Յատկապէս բնութեան մէջ գիրկընդխառնուածը կը համադրէ Անդաստանն ու Ծննդոց Գրքի հետեւեալ տողերը. «Երկիրը կանաչ խոտ թող բուսցնէ, սերմ տուող խոտ եւ իր տեսակին պէս պտուղ տուող պտղաբեր ծառ» (Ծնն. Ա 11): ➥ *էջ 7*

Արդվի գյուղի պատմաճարտարապետական նշանավոր հուշարձանները

ՀՀ-ի Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի Արդվի գյուղը գտնվում է ծովի մակարդակից շուրջ 1450 մ բարձր, մարզկենտրոնից մոտ 65 կմ հյուսիս-արեւելք, քաղաքամայր Երեւանից մոտ 185 կմ հեռավորությամբ (դեպի հյուսիս-արեւելք):

Արդվի գյուղը հարուստ է պատմաճարտարապետական ու բնության հուշարձաններով ու տեսարժան վայրերով: Գյուղում ու շրջակայքում պահպանված հուշարձաններից են՝ դամբարանադաշտ, գյուղատեղի, եկեղեցիներ, մատուռ (Ս. Կիրակի), միջնադարյան գերեզմանոցներ, տապանաքարեր, կացարանների մնացորդներ, տնատեղեր, ձիթհաններ, աղբյուրներ, բազում խաչքարեր:

Արդվի գյուղի հյուսիսարեւմտյան եզրին՝ մոտ 0,5 կմ հեռավորությամբ, գտնվում է Սուրբ Հովհաննես (Սրբանես) վանական համալիրը: Հուշարձանախումբը բաղկացած է միմյանց կից երկու եկեղեցիներից, զանգակատնից, քառակող կոթողից, վանական օժանդակ շինությունների ու կացարանների մնացորդներից, խաչքարերով, տապանաքարերով եւ մահարձաններով հարուստ գերեզմանոցից:

Եկեղեցիները երկլանջ կտուրով միանավ թաղակապ դահլիճներ են՝ իրար կցված երկայնական ուղղությամբ: Արեւմուտքից գտնվում են ճակատային նույն գծի վրա, իսկ արեւելյան կողմից՝ հարավային եկեղեցին հյուսիսային եկեղեցուց առաջ է ընկած մոտ 1,5 մ: Եկեղեցիների միջեւ բացակայում է կառուցվածքային կապը, եւ միմյանց հետ հաղորդակցվում են ընդհանուր պատի մուտքային բացվածքով: Եկեղեցիները լուսավորվում են խորանի արեւմտյան (հարավային դահլիճը՝ նաեւ հարավային) կողմին բացված մեկական պատուհաններից: Ճակատները պսակված են պարզ տրամատ ունեցող գոգավոր քիվով:

Հյուսիսային դահլիճն ավելի փոքր է, ունի պայտաձեւ խորան, քառակուսաձեւ աղոթասրահ: Մուտք ունեցել է նաեւ արեւմտյան կողմից (այժմ փակված է), քանի որ հետագայում այս կողմից կցվել է ոչ մեծ խորության թաղակապ սրահ: Բեմին կից՝ երկայնական առանցքից փոքր-ինչ շեղված, գտնվում է սուրբ Հովհան Գ Իմաստասեր Օձնեցի Կաթողիկոսի քարարկղային դամբանը՝ ծածկված երկլանջ սալաքարով:

Հարավային դահլիճի խորանը պայտաձեւ է, հատակը ծածկված է տապանաքարերով, որոնց մի մասը մնացել է հյուսիսային պատի տակ: Արեւմտյան պատուհանի բարավորից վերեւ ագուցված է ավելի վաղ ստեղծված նրբահյուս զարդանախշերով խաչքար: Եկեղեցու մուտքը հարավից է:

Եկեղեցիները կառուցված են ճեղքված անդեզիտի ոչ մեծ, անկանոն քարակտորներով՝ բացառությամբ հյուսիսային եկեղեցու արեւելյան պատի ստորին երեք շարքի, որոնք սրբատաշ մեծաքարերով են շարված:

Հյուսիսային եկեղեցին իր սկզբնական հորինվածքով վերաբերում է ավելի վաղ շրջանի, քան ամբողջ հուշարձանախումբն ընդհանրապես: Այն հետագայում (հավանաբար՝ XVII դ.)՝ մյուս հուշարձանների կառուցումից հետո, ենթարկվել է վերակառուցման:

Վանքի խորանարդաձեւ, զանգաշտարակավոր թաղակապ զանգակատունը տեղադրված է հարավային եկեղեցու հարավային կողմում: Մուտքը հարավից է, լուսավորվում է արեւելյան պատի միակ պատուհանից: Զանգակատան շարվածքում դրվել են տապանաքարեր, խաչքարերի բեկորներ: Վեցյունանի ռոտոնդայով պսակված զանգաշտարակը պատված է կարմրավուն ֆելզիտե ծածկասալերով: Հարավային եկեղեցու հյուսիսային պատին ներքուստ ամրացված մարմարե սալիկին փորագրված արձանագրությունը հայտնում է, որ եկեղեցին ու զանգակատունը 1902 թ. նորոգվել են արդվեցի Մելիքսեթ Քալանթարյանի բարերարությամբ:

Կարմիր վանք կոչվող եկեղեցին (X–XI դդ.) գտնվում է Արդվի գյուղ մտնող ճամփեզրի ձախակողմյան՝ բարձրադիր փոքր հարթակի վրա: Եկեղեցին երկլանջ կտուրով միանավ ոչ մեծ դահլիճ է: Միակ մուտքը հարավից է: Եկեղեցին խոնարհված, հետագա գոյությունը վտանգված ու անմխիթար վիճակում է: Ծածկը չի պահպանվել, իսկ դեռեւս կանգուն մնացած որմնապատերը կիսախարխուլ են: Կիսագլանաձեւ թաղը միջնամասում ուժեղացված է եղել որմնասյուներից բարձրացող թաղակիր կամարով: Գմբեթարդը կիսաշրջանաձեւ խորանից սահմանազատված է գոտիով, որը շարունակվում է նաեւ երկայնական պատերի վրա: Կառուցված է դեղնակարմրավուն ֆելզիտի սրբատաշ մեծաքարերով, որի համար էլ, հավանաբար, ստացել է Կարմիր վանք անունը: Ժողովրդական ստուգաբանությամբ՝ լեզգիների արշավանքի ժամանակ եկեղեցում պատսպարված անզեն բնակչության կոտորածի հետեւանքով արյան վտակ է դուրս հոսում՝ արյունով ներկելով եկեղեցու քարերն ու շրջակայքը, որից էլ եկեղեցին ստացել է իր անվանումը: Կառույցն աչքի է ընկնում պատի շարվածքի եւ քարի մշակման բացառիկ բարձր որակով: Կառուցման ժամանակը փաստող հիշատակագրեր չեն պահպանվել: Հորինվածքային տվյալներով նմանվում է X–XI դդ. հուշարձաններին: Եկեղեցու շրջակայքում տարածվում է միջնադարյան գերեզմանոցը:

Քառակող կոթողը (XVII դ.) գտնվում է զանգակատան հարավարեւելյան անկյունային մասում: Դեղնավուն ֆելզիտից կերտված 2 մ բարձրությամբ կոթողն ագուցված է միակտոր խորանարդաձեւ պատվանդանին: Ունեցել է վերնամասը պսակող գագաթ: Արեւմտյան ճակատին ուղղաձիգ շարքով փորված է պարզ գծագրությամբ երեք մեծ խաչ, որ իրարից տարբերվում են հորինվածքով, չափերով ու մշակվածությամբ: Միջին խաչի ստորին խաչաթեւի երկու կողմերին նշմարվում է մակագրություն, որը, ցավոք, անընթեռնելի է դարձել: Խաչապատկերներ են փորագրված նաեւ կոթողի վերնամասում՝ արեւելյան եւ հյուսիսային ճակատներին:

Վանքն առնված է անկանոն շրջագծով ոչ բարձր պարսպաշարի մեջ: Շրջապարսպից դուրս՝ արեւմտյան բարձրադիր մասում, միջնադարյան գերեզմանոցն է՝ մեծաթիվ ուշագրավ խաչքարերով ու տապանաքարերով: Արեւելյան կողմում Քալանթարյան տոհմի ներկայացուցիչների ու շառավիղների մահարձաններն են:

Մի այլ *քառակող կոթող* էլ գտնվում է գյուղի հարավարեւելյան կողմում՝ գյուղ մտնող ճանապարհից ներքեւ: Կոթողի պահպանված մասն ունի 2,2 մ բարձրություն՝ ագուցված խորանարդաձեւ պատվանդանին: Արեւմտյան ճակատի՝ ուղղանկյուն շրջանակով չորս մասի բաժանված հատվածներից երկուսի վրա փորագրված են հավասարաթեւ խաչեր, մյուսների մակերեւույթը քայքայված է: Հարավային եւ հյուսիսային ճակատները պատված են ոճավորված տերեւներ ու ողկույզներ ունեցող որթագալարով՝ նման Դսեղի գերեզմանատան կոթողի զարդաքանդակներին:

Պատմաճարտարապետական զարմանահրաշ հուշարձաններով հարուստ մի գողտրիկ անկյուն է Արդվի գյուղը, որ հմայում է բոլոր այցելուներին, ուստի բնավ էլ պատահական չէ, որ չքնաղագեղ Լոռվա բնության այս կտորը չի վրիպել հայ կինոռեժիսորների աչքից: Արդվի գյուղում են նկարահանվել աշխարհահռչակ Փարաջանովի «Նռան գույնը» գործի, Հենրիկ Մալյանի՝ Հրանտ Մաթեւոսյանի «Մենք ենք, մեր սարերը» վիպակի էկրանավորման, Ակսել Բակունցի «Միրհավը» պատմվածքի հիման վրա Հ. Մաթեւոսյանի բեմագրով ստեղծված՝ Յու. Երզնկյանի ու Է. Մարտիրոսյանի «Այս կանաչ, կարմիր աշխարհը» ֆիլմի որոշ հատվածներ: ➥ *էջ 8*

Հաղթել մահին նշանակում է խորությամբ ապրել

➥ *էջ 4*

Մահացողն ինքն էլ ջանք չի խնայում սիրելի անձի հետ լինելու համար, քանի որ դա կարող է երջանկացնել կամ օգնել իր սիրելիին: Ես հիմա թույլ եմ տալիս ինձ պատմել անձամբ իմ մասին: Իմ մայրը երեք տարի շարունակ տառապում էր քաղցկեղով: Ես խնամում էի նրան: Մենք շատ մտերիմ էինք եւ թանկ մեկս մյուսի համար: Սակայն ես աշխատում էի. լոնդոնյան համայնքի միակ հոգեւորականն էի եւ դրանից բացի՝ ամիսը մեկ անգամ պետք է մեկնեի Փարիզ՝ Եպիսկոպոսական խորհրդի ժողովին մասնակցելու համար: Փող չունեի հեռախոսով զանգելու համար, այդ պատճառով էլ վերադառնալիս միշտ մտածում էի՝ մորս ողջ կտեսնեմ թե՞ ոչ... Նա ողջ էր. ինչպիսի՜ ուրախություն, ինչպիսի՜ հանդիպում...

Կամաց-կամաց նա սկսեց մարել: Պահեր են եղել, երբ նա զանգել է ինձ, կանչել ու ասել. «Ես տխուր եմ առանց քեզ, մի քիչ միասին լինենք»: Բայց նաեւ պահեր են եղել, որ ինձ համար է անտանելի եղել: Ես, թողնելով իմ գործերը, բարձրանում էի նրա մոտ ու ասում. «Ես վատ եմ զգում առանց քեզ»: Նա ինձ մխիթարում էր, երբ հարցը վերաբերում էր իր մահվանն ու մեռնելուն: Եվ այդպես մենք միասին օր օրի գնում էինք հավերժություն: Երբ նա մահացավ, իր հետ տարավ իր հանդեպ ունեցած իմ ողջ սերը, այն ամենը, ինչ կար իմ ու իր միջեւ, իսկ մեր միջեւ այնքա՜ն շատ բան կար: Մենք համարյա մեր ողջ կյանքը միասին ապրեցինք, միայն վտարանդիության առաջին տարիներին ստիպված եղանք իրարից անջատ ապրել, որովհետեւ միասին ապրելու հնարավորություն չունեինք: Բայց հետո ստացվեց միասին ապրել: Նա ինձ խորությամբ գիտեր: Մի անգամ նա ինձ ասաց. «Ինչ տարօրինակ է, որքան քեզ շատ եմ ճանաչում, այնքան քիչ կարող եմ խոսել քո մասին, որովհետեւ յուրաքանչյուր խոսք, որ կարող եմ ասել, պետք է շտկել որեւէ լրացուցիչ բաղադրիչով»: Այո՛, մենք հասել էինք այնպիսի վիճակի, այնպիսի խորությամբ գիտեինք միմյանց, որ իրար ասելու բան չունեինք, իսկ կյանքին հաղորդակցվելը, մահվան ու մեռնելու մասին՝ կարող էինք:

Եվ այսպես՝ մենք պետք է հիշենք, որ յուրաքանչյուր մեռնողի վիճակում գտնվող մարդու համար անտանելի է մեր անգթությունը, անտարբերությունը, կամ՝ ցանկությունը, թե՝ «Վերջապես երբ սա կավարտվի»: Մեռնողը դա զգում է, գիտի: Մենք պետք է սովորենք հաղթահարել մեր ներսում առկա մութ, մռայլ, տհաճ զգացումները եւ մոռանալով ինքներս մեզ՝ խորությամբ մտորենք եւ հարմարվենք մեռնող դիմացինին: Այդ ժամանակ է, որ մահը դառնում է հաղթանակ. «Օ՜, մահ, ո՞ւր է քո խայթը, օ՜, մահ, ո՞ւր է քո հաղթանակը: Քրիստոս հարյավ, եւ ոչ մի մեռյալ գերեզմանում չկա» (Հովհ. Ոսկեբերան):

Ուզում եմ մի բան էլ ասել մահվան մասին, որովհետեւ այն, ինչ ես արդեն ասացի, շատ անձնական էր:

Մահը մշտապես շրջապատում է մեզ, մահը ողջ մարդկության ճակատագիրն է: Հիմա պատերազմ է ընթանում, սարսափելի տանջանքներով մարդիկ են մահանում, եւ մենք պետք է սովորենք հանգիստ վերաբերվել սեփական մահվանը, որովհետեւ մենք դրանում ենք տեսնում կյանքը, ծնունդը հավիտենական կյանքի: Մահի, մահվան վախի հանդեպ հաղթանակի իմաստն այն է, որ ապրենք ավելի խորը, բովանդակ հավիտենությամբ, եւ ուրիշներին էլ հաղորդակից դարձնենք կյանքի այդ լիությանը:

Սակայն մահից առաջ այլ վիճակներ էլ են լինում. մենք միանգամից չենք մահանում եւ ոչ էլ միայն մարմնով: Շատ տարօրինակ երեւույթներ էլ են տեղի ունենում: Հիշում եմ մի ծեր կնոջ՝ Մարիա Անդրեեւնային՝ մի փոքրամարմին հրաշալի արարածի, որը մի անգամ այցելեց ինձ ու ասաց. «Հայր Անտոնի, ես չգիտեմ՝ ինչ է կատարվում ինձ հետ. ես այլեւս քնել չեմ կարողանում: Գիշերվա ողջ ընթացքում հիշողությանս մեջ արթնանում են անցյալիս պատկերները, որոնք ոչ թե լուսավոր են, այլ մթածին, վատ, ինձ տանջող պատկերներ: Դիմեցի բժշկի, խնդրեցի որեւէ քնաբեր, բայց քնաբերներն էլ չեն օգնում հեռացնելու այդ միրաժները: Չեմ կարողանում ազատվել այդ կերպարներից: Նրանք անվերջ զառանցում են, եւ ես ավելի եմ վատանում: Ի՞նչ անեմ»: Այդ ժամանակ ես նրան ասացի. «Մարիա Անդրեեւնա, գիտե՞ք, ես վերամարմնավորմանը չեմ հավատում, բայց հավատում եմ, որ Աստուց տրված է մեզ կյանքը ոչ միայն մեկ անգամ վերապրելու. ասածս չունի այն իմաստը, թե Դուք կմահանաք եւ կրկին կյանք կվերադառնաք, այլ այն, ինչը որ հիմա տեղի է ունենում Ձեզ հետ: Երբ երիտասարդ եք եղել, Ձեր նեղմիտ հասկացության շրջանակներում երբեմն վատ բաներ եք արել. խոսքով, մտքով, գործերով վնասել եք եւ Ձեզ, եւ ուրիշներին: Հետո դա մոռացել եք եւ տարբեր տարիքներում Ձեր ըմբռնումներին համապատասխան շարունակել եք գործել նույն կերպ՝ կրկին նվաստացնելով Ձեզ, վիրավորելով, արատավորելով: Հիմա, երբ արդեն ուժ չունեք պայքարելու Ձեր հիշողությունների դեմ, նրանք դուրս են նետվում եւ ամեն անգամ մեջտեղ ելնելով՝ փորձում են Ձեզ ասել, որ Դուք արդեն 80 անց եք՝ համարյա 90 տարեկան: Եթե Դուք հայտնվեք իրավիճակներում, երբ 20, 30, 40, 50 տարեկան էիք, որոնք այժմ հիշում եք, արդյոք կվարվե՞ք այնպես, ինչպես վարվել եք այդ ժամանակներում: Եթե Դուք կարողանայիք լրջորեն նայել այն ամենին, ինչ եղել է անցյալ ժամանակներում, եւ մարդկանց ասել՝ «Ո՜չ, այսօր, իմ կյանքի փորձից ելնելով, ոչ մի դեպքում չէի կարող այդպես վարվել, ինչպես վարվել եմ», եթե կարողանայիք ասել դա Ձեր ողջ էությամբ, մտքով, սրտով, կամքով, ողջ մարմնով, ապա այն Ձեզանից կհեռանար: Այլապես կհայտնվեն այլ կերպարներ՝ նորից ու նորից: Եվ ամեն անգամ, երբ կհայտնվի որեւէ կերպար, Ձեր առաջ Աստված հարց կդնի՝ «Դա քո անցյալի՞ մեղքերն են, թե՞ դեռեւս այսօրյա մեղքերը»: Քանի որ եթե Դուք ինչ-որ ժամանակ ատել եք որեւէ մարդու եւ չեք ներել նրան, չեք հաշտվել նրա հետ, ապա այդ ժամանակվա մեղքը նաեւ այժմյան Ձեր մեղքն է, այն Ձեզանից չի հեռացել եւ չի էլ հեռանա, քանի դեռ չեք ապաշխարել»:

Այս կարգի մեկ այլ օրինակ էլ կարող եմ բերել: Մի անգամ մեր զառամյալ, լուսավոր կանանցից մեկի ընտանիքից ինձ կանչեցին: Նա անտարակույս պետք է այդ նույն օրը մահանար: Նա խոստովանեց, եւ վերջում ես նրան հարցրեցի. «Հիմա ասեցե՛ք ինձ, Դուք բոլորին ներե՞լ եք, թե՞ դեռ ինչ-որ մաղձ մնացել է Ձեր հոգում»: Նա պատասխանեց. «Բոլորին ներել եմ՝ բացի իմ փեսայից, ես նրան երբեք չեմ ների»: «Այդ դեպքում ես Ձեզ ո՛չ թողություն կտամ եւ ո՛չ էլ հաղորդություն: Դուք կգնաք Աստծու դատաստան եւ Աստծուն պատասխան կտաք Ձեր խոսքերի համար: Նա ասաց. «Չէ՞ որ ես այսօր մեռնելու եմ»: «Այո՛, Դուք մահանալու եք, մահանալու եք առանց մեղքերի թողության եւ առանց հաղորդության, եթե չապաշխարեք ու չհաշտվեք Ձեր փեսայի հետ: Ես մեկ ժամից կգամ»,— ասացի ու գնացի: Երբ մեկ ժամ հետո վերադարձա, նա ինձ դիմավորեց շողշողուն հայացքով ու ասաց. «Դուք իրավացի էիք: Ես զանգեցի փեսայիս, ու մենք բացատրվեցինք, հաշտվեցինք: Նա հիմա գալիս է ինձ մոտ, հույս ունեմ մինչեւ մահս կհասնի, մենք կողջագուրգուրվենք, եւ ես մուտք կգործեմ հավերժություն բոլորի հետ հաշտված»:



Թարգմանությունը՝ Ա. Ս.-ի

Հոգեգալստեան «Ամէն. ալէլուիա»-ն Սեւանի մէջ

↩ էջ 3, 5

Հողին եւ հողէն ստեղծուած արարածոց առատութեան եւ օրհնութեան համար կազմաւորուած արարողութիւն մըն է սա, եւ Սեւանի շրջակայքն իր ամբողջ էութեամբ կարող է արարողութեան խորհուրդը խորացնել եւ ծիսական կանոնով օրհնութեան գաղտնիքը ներկայացնել հաւատացելոց: Ծիածանեալ Սեւանայ լիճը, խորարմատ Ս. Առաքելոց տաճարը, դիմացի դալարազարդ լեռները, կապուտակ երկինքը... Արարողութիւնը ներկայացնելն այս պարագային համահաւասար է բնութեան գեղեցկութիւնը գովելու, վասն զի այս շրջանի զարթուցեալ բնոյթով լի անդաստանին մէջ կը կատարուի եկեղեցական ժողովրդականացեալ արարողութիւնը՝ Անդաստանը:

Ահա այս եզակի արարողութիւնն սկիզբ առաւ, երբ միասնաբար երգել սկսանք. «Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք»-ը: Այլեւս ամէն ինչ եղանակաւ էր, քարոզներ ու պատասխանները եւ օրհնութեան կարգը, ու իւրաքանչիւր անձ առաւել եւս կ'ոգեւորուէր, երբ իր կողքին երգող ուրիշ անձ մը եւս կը տեսնէր: Ալիք առ ալիք կը տարածուէր հզօր աղօթական մթնոլորտէն բխած մաղթանքները: Իսկ միւս կողմէ, թերակղզիի գագաթը ըլլալու պատճառաւ, արեւաշող դաշտերու վրայ ազդու կը դառնար գարնանային ուժեղ զեփիւռը, բան մը, որ ուր մնաց պիտի թռցնէր բոլորս: Բայց նորէն ալ աւելի զօրաւոր ու ամուր կը շարունակենք երգել մաղթանքը. Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա...

«Օրհնեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի...»: Այս բանաձեւով կը սկսի աշխարհի չորս կողմերն օրհնելու տենչով պատրաստուած աղօթքը, զոր կ'արտասանուի հոգեւորականի կողմէ: Յատկապէս իմաստաւոր կը դառնայ այս արարողութիւնը, երբ կ'օրհնէք «վանքս, անապատս, քաղաքս եւ գիւղս»՝ տեսնելով վանքը, անապատը, հայեցի քաղաքներն ու գիւղերը: Եւ կամ որքան եզակի պահ է «երկիրս անդաստանս եւ պտղաբերութիւն տարուոյս» ըսելը՝ ըլլալով պտղաբերութեան պատրաստ արտի, պարտէզներու, պուրակներու մերձաւոր: Հետեւաբար մէկ կողմէ աղօթեցի, իսկ միւս կողմէ բառերուն համապատասխան հայեցի սրբութիւններու մասին մտածեցի: Յատկապէս մթնոլորտը յատկանշական կը դառնար, երբ ս. առաքելոց մասունքով օրհնութիւն կը բաշխէր Մինաս քահանան:



Հանդիսաւոր թափորը դէպի Ս. Առաքելոց եկեղեցի յիշեցուցած էր Աղթամարի մթնոլորտը: Անդաստանի արարողութիւնը եւս կրկին անգամ եկաւ յիշեցնելու Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ երբեմնի Վասպուրականի, այժմու Վանայ լճի կողքին մեր կատարած անդաստանները: Բնութեան մէջ կատարուած արարողութիւնները գրեթէ յար եւ նման են: Պահ մը յիշելով անցեալի արարողութիւնները՝ կարծեցի, որ փոխանակ Սեւանի կը գտնուիմ Աղթամար, փոխանակ ճեմարանականներու կ'երգեն պոլսեցի դպիր ու սարկաւագ եղբայրներս: Հաւատացեալներու եւս մասնակցութիւնն առաւել եւս կը պարարտացնէր այս զգացմունքը, եւ կը կարծեմ, որ Անդաստանի արարողութեան հազուագիւտօրէն ազդու եղած շրջանի մը մէջ կը գտնուէինք: Ուստի Անդաստանի ճամբով օրհնեցինք բոլոր աշխարհը, սակայն ի մասնաւորի աղօթքի կեդրոնական վայր ընկալելով Սեւանավանքը՝ յատուկ աղօթք բարձրացուցինք Սեւանավանքի պայծառութեան եւ շրջակայքին անսասանութեան համար: Ահա նման ոգեւորութեամբ է, որ աւարտին կը հասնի Անդաստանի արարողութիւնը, եւ Պահպանիչ աղօթքով յատուկ ձեւով կը յիշատակուին հայ ժողովուրդը, Հայ Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Սեւանավանքը եւ Վազգէնեան հոգեւոր ճեմարանը ու հաւատացեալ ժողովուրդը: Թող որ Աստուած լսելի դառնայ ուխտաւորաց աղօթքները, եւ ամէն տարի Հոգեգալուստի տօնին առաւել եւս շէննայ այս սրբավայրը. Ամէն:

Վեհափառ Հայրապետի տեսիլքը

Սեւանավանքի մէջ կատարուած արարողութեան աւարտին ուրախութեամբ պարուրուած հոգւոյս մէջ նաեւ նշմարեցի Սեւանավանքի կարեւորութիւնը եւ որպէս ապրող հաստատութիւն՝ իր ունեցած վերելքի տարիները: Նախորդ այցելութեանս ժամանակ լսած էի Սեւանավանքի վերահաստատման եւ Վազգէնեան հոգեւոր ճեմարանի վերածննդեան պատմութիւնը, որուն հիմնական ռահվիրան էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հոգեգալստեան տօնին կատարուած այս արարողութիւնը եւ մթնոլորտին խիստ տպաւորիչ ներշնչանքը անգամ մը եւս ուղղեցին, որ աւելի քան 30 տարի առաջ վերստին հիմնադրուած կառոյցին յառաջադիմութեան թափանցենք: Այս մէկն ազգիս Վեհափառ Հայրապետին տեսլականին հաւաստիքը պէտք է համարուէր, որովհետեւ 1990-ական թուականներուն Հայաստանի բազմապիսի անկեալ դպրեվանական համալիրներուն մէջէն ընտրուած էր Սեւանը, եւ այսօր նոյն կառոյցը թերակղզիի շրջակայքին մէջ կը դառնայ Հայ Եկեղեցւոյ աննման սրբավայրերէն մին: Վեհափառը կարող չէ՞ր այլ վանք մը կոչել որպէս դպրանոց եւ Սեւանը միայն թողուլ Ս. Առաքելոց եկեղեցիով: Կարող էր անշուշտ թէ: Սակայն կը կարծեմ, որ տեսաւ Սեւանալճին աննման շունչը, կապոյտին եւ կանանչին իրար խառնուած շքեղ պատկերը ու որոշեց զարթուցանել Սեւանը: Սեւան աննման ծովուն կողքին բարձրացած այս շքեղ համալիրն ահա ներկայիս կը մնայ իր բարձր պատնէշին վրայ՝ շնորհիւ ու օրհնութեամբ Վեհափառ Հայրապետին: Վազգէնեանի սաները կ'ըմբոշխնեն Մաշտոց վրդ. Եղիվարդեցիի սրբակենցաղ շունչով 9-րդ դարուն կառուցուած Սեւանավանքը ու կ'երգեն Սեւանայ բարձունքին իրենց ներշնչողական ձայնով. Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա...

Ահա անդաստանի աղօթքներուն մէջ յիշուած «Հայրապետութիւն Հայոց» բանաձեւը կը վերաբերի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, որ կը հոգայ իր սրբավայրերուն ըստ կարելւոյն, եւ նոյն բանաձեւի ճամբով կը յիշատակուի նաեւ Վեհափառ Հայրապետը, որ Սեւանի վանքի մասնայատկութեան մէջէն կը մնայ հիմնադրողն ու տեսնողը Սեւանի վանքի հիանալի մթնոլորտին: Թող որ Աստուած լսելի դառնայ բոլորիս աղօթքները, եւ Սեւանավանքի օրհնութիւնը միանայ Մայր Աթոռոյ արմատներուն. Հոգեգալստեան տօնախմբութիւնը նաեւ նոր տեսիլքներով օժտէ Նորին Սրբութիւնը, որպէսզի որպէս Հայրապետ ազգիս Հայոց՝ շարունակէ նոր հիմքեր դնել Հայ Եկեղեցւոյ անդաստանէն ներս. Ամէն:

Յարութիւն աբեղ. ՏԱՄԱՏԵԱՆ

Ռաֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպը

↩ էջ 5

Գրողի գեղարվեստական երեւակայության հնարավորություններն անսպառ են, բայց նրա կառուցողական ձիրքը որոշակի պատմական իրականության պահանջների շրջանակում է: Վեպը, ինչպես նշեցինք, բաղկացած է երեք գրքից: Հյուսվածքը միագիծ չէ, պատումի հոսանքներ կան, որոնք սկսվում են շարադրանքի սկզբում, բայց որոնց հանգույցները վերջում են: Սա բորբոքում է ընթերցողական հետաքրքրասիրությունը եւ դիպաշարը դարձնում գրավիչ:

Հեղինակն ընթերցողին միանգամից մտցնում է գործողությունների մեջ. «Մինչեւ 1722 թվականը, այսինքն՝ մինչեւ Դավիթ Բեկի հայտնվիլը, հայոց մելիքները տակավին պահպանել էին իրանց նշանակությունը» (*Ռաֆֆի, «Երկերի ժողովածու», հ. 7, Երեւան, «Սովետական գրող», 1985, էջ 7.* հաջորդ մեջբերումներն այստեղից են): Եվ սկսվում է հայոց երկրի բուն իրականության, մելիքների ով կամ ինչ լինելու մանրամասների նկարագրությունը: Ռաֆֆին շատ արագ, մի քանի ուրվագծերով ստեղծում է վիպական կենդանի միջավայր, ինչին մեծապես նպաստում են ոչ միայն կերպարների կենսականությունը, տեղանքի տարածական ամբողջական նկարագրությունը, այլեւ մանրամասների ճշգրտությունը, եւ դա այնքան բնական, որ ընթերցողը հայտնվում է նրա պայմանական իրականության մեջ: Այստեղ է գեղարվեստի հմայքը եւ մեծ գրականության նշանակալիությունը:

Գործողության մեջ է մտնում Գենվազի երիտասարդ իշխան Ստեփանոս Վրթանեսյանը՝ Շահումյան տնից, որը, զրկված հայրենական ամրոցից, թափառում է Սյունյաց աշխարհում եւ մելիքներին հորդորում «միաբանվել ու ընդհանուր ապստամբությամբ թոթափել խաների ծանր լուծը» (էջ 11): Ռաֆֆին որքան ազգապաշտ, բայց նույնքան էլ խիստ է ստրկության դատապարտված իր ազգակիցների հանդեպ, ինչը վիպական հյուսվածքի ներքին շերտով առաջ է գնում: Զանգվածի վերածված ժողովրդին արթնացնելու հույսով՝ գրողը նաեւ ասում է. «Հայ ժողովուրդը կատարյալ ոչխարային բնավորություն ունի, մեկը պետք է առջեւից գնա, որ մյուսները հետեւեն նրան» (էջ 12): Հիմա այդ *Մեկի* հարցն է՝ «Ո՞վ կարող է լինել այդ մեկը» (էջ 12): Այդ մեկը ինքը՝ Ստեփանոսն է: Բայց ինքը ընդամենն ունեզրկված իշխան է, որովհետեւ Գենվազի իր ամբողջ գավառը հիմա խանի սեփականությունն է: Եվ նա *որոնում է իր նմանակ այդ Մեկին, որը Դավիթ Բեկն է:* Ահա նրան հայրենիք կանչելու նպատակով Օրդուբադում կնիքներ է պատվիրում մի հրեայի, որպեսզի նշանավոր մարդկանց անուններով նամակներ հասցեագրի Դավիթ Բեկին:

Սա պատումի առանցքային գիծն է, բայց զուգահեռաբար Ռաֆֆին խորանում է այս ոսկերիչ հրեա Հարունի կենցաղի մեջ, մտնում նրա տուն, ի ցույց դնում հրեայի եւ նրա կնոջ՝ Եսթերի չդասավորված հարաբերությունները, ներկայացնում պատճառները, բացահայտում հրեայի բնավորությունը: 65-ամյա հրեան ամուսնացել է 16 տարեկան աղջկա հետ եւ նրան ու երեխային տան վանդակի մեջ պահում է սոված ու արհամարհված, որովհետեւ նրանը միայն կուտակման կիրքն է: Փողի անուն լսելիս հրեայի աչքերում փայլում է մի «....տեսակ լույս, որ կարելի է տեսնել քաղցած գայլի աչքերում միայն» (էջ 16), մինչդեռ, ոսկու եւ արծաթի կույտեր դիզելով հանդերձ, նա ներկայանում է վերջին մուրացկանի պես: Վեպի ընդհանուր համակարգը նկատի ունենալով՝ այստեղ Ռաֆֆին կարող էր այդքան չխորանալ, որովհետեւ դա վեպի առանցքային պահանջը չէր, բայց խորանում եւ ուրվագծում է մանրամասներ, շարադրանքը դարձնում հետաքրքրական եւ ստեղծում վիպական տեսանելի միջավայր: Այս ամենով հանդերձ՝ հատվածը ոչ թե մնում է մեկուսի՝

Գործ՝ Է. Իսաբեկյանի

որպես առանձին պատմվածք, այլ ձուլվում է վիպական համապատկերին՝ որպես տեղային դիպուկ ուրվանկար:

Ռաֆֆին վարպետորեն կարգավորում է *թե՛ վիպական տարածությունը եւ թե՛ վիպական ժամանակը.* «Մինչ հրեան կպատրաստե կնիքները, ես կպատմեմ մի անցք, որ պատահեց մոտավորապես տասնհինգ տարի առաջ» (էջ 22): Հիմա արդեն 15 տարվա վաղեմությամբ գործողության մեջ է մտնում Ֆաթալի խանը: Երեւում է մելիք Դավիթ Ուրացողի դուստր Սյուրին՝ խանի հարեմի զարդը, երեւում է ներքինի դարձած, անունը փոխած, բայց հայության դատից չհեռացած՝ ծնունդով ղարաբաղցի Ահմեդը: Սյուրին Ահմեդի ուղեկցությամբ գիշերով գաղտնի այցելում է հեռավոր ժայռերի քարանձավների մեջ գերեվարված հայերին, որոնց մեջ էր նաեւ Ստեփանոս իշխանը, որը, ինչպես վերջում է պարզվում, իր աղջկա՝ Ֆաթիմայի հայրն է: Սերը նրան ստիպում է դիմել հանդգնության, եւ նա գնում է՝ փոխելու գելարանների մեջ տանջվող սիրեցյալի վիրակապերը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արվեստի վաստակավոր գործիչ

Ներսես Շնորհալու ստեղծագործությունների մանկավարժական բնույթը

➥ էջ 3

Բարոյադաստիարակչական այս նպատակի ավանդները գալիս էին դեռ 5-րդ դարի պատմիչներից: Շարունակելով հետեւել Խորենացուն՝ ինքնաճանաչման, ազգային ինքնագիտակցության, պատմական հիշողության արթնացման համար, Շնորհալին եւս նույն կարեւոր հարցադրումներն է անում. ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս: Այս հարցերի պատասխանները գտնելը խիստ անհրաժեշտ էր նաեւ Շնորհալու ժամանակ:

Իր երկի նպատակը Շնորհալին համարում է նաեւ իր հասակակիցներին՝ երիտասարդներին, հոգեւոր «խրախճանք տալը» (էջ 37).

Հասակակցաց խրախճան տուեալ,
Որք իմաստից են ցանկացեալ:

Իսկ այս նպատակի իրագործման համար շատ կարեւոր է հակիրճության մեթոդի կիրառումը, ինչին դիմում է Շնորհալին: Առհասարակ նյութի հակիրճ, ամփոփ ներկայացումը մեծ նշանակության ունի ուսուցման գործընթացում հաջողելու հարցում (էջ 34).

Զօր կարճառօտ եւ ըստ կարգի
Շարագրեցից յայսմ տառի,
Զվերծանողդ մաղթելի,
Գեր քան զկարն չխնդրելի:

Բացի նախերգանքից՝ «Վիպասանութեան» մեջ եւս Շնորհալին մի քանի անգամ ընդհատում է խոսքը՝ ընթերցողին չձանձրացնելու նպատակով (էջ 43–44).

Եւ յալ բազում գոն համարեալ,
Որ ի սոսա են յարմարեալ,
Զոր աւելորդ թուի վարկեալ,
Ծուլագունից լուր ծանրացեալ:

Զգալով, որ Աբգարի մասին խոսքը երկարում է, բանաստեղծը գրում է (էջ 54).

Զոր աշխարեմ ոչ յերկարեալ,
Զի կանխագոյն էաք դարձեալ:

Պոեմն սկսվում է «Վիպասանութիւն նախնի՝ ըստ Հոմերի, սկսեալ ի վերուստ» խորագրով: Շնորհալին նկարագրում է արարչագործության պատմությունը, հակիրճ ներկայացնում մարդու՝ դրախտից վտարումը, մեղքով ապականվելը, Ջրհեղեղը, Նոյի փրկությունն ու նոր մարդկության սկիզբը: Աշտարակաշինությունից եւ լեզուների բաժանումից հետո Թորգոմի սերունդները բնակեցնում են նաեւ Հայաստանի տարածքը: Այս հատվածը չպետք է դիտել միայն կրոնական

լույսի ներքո: Շնորհալին հայ ազգի ծագումնաբանությունը հանգեցնում է մարդկության ծագմանը, ցույց տալիս ազգային արմատների ծագումը, հայոց ազգի սերումը Նոյի սերունդներից: Հայկ նահապետին նվիրված հատվածը բավականին կարճառոտ է, բայց կարեւոր բնութագրումներով: Նշվում է, որ Հայկի անունով կոչվել ենք հայեր, իսկ Արամանյակի անունով՝ «Արմէնք մեք կոչեցեալ»: Այսպես՝ Շնորհալին տալիս է նախաբանում առաջադրած «ո՞վ ենք մենք», «որտեղի՞ց ենք գալիս» հարցերի պատասխանները:

Խորանցուն հետեւելով եւ որպես հիմնական աղբյուր ունենալով՝ Շնորհալին եւս պատմական անախրոնիզմի է դիմում՝ խախտված ներկայացնելով պատմական անձանց եւ դեպքերի ժամանակագրական հաջորդականությունը: Բայց դա չի խանգարում գլխավոր նպատակի իրագործմանը՝ արթնացնել պատմական հիշողությունը, նախնիների գործերի օրինակով հայրենասիրություն սերմանել, ոգեւորել ու մղել պետականության վերականգնման համար պայքարի:

Շնորհալին իր հայրենասիրության դասը ժողովրդին փորձում է տալ անցյալի նշանավոր գործիչների կյանքի ու գործերի օրինակով: Ըստ այդմ՝ կերպարային համակարգը բեւեռացված է՝ բաժանված դրական ու բացասական հերոսների: Ա. Մադոյանը նշում է, որ Շնորհալու հերոսներից շատերը կերպար չեն դառնում, չեն մարմնավորվում, անկենդան են, ինչը պայմանավորված էր վիթխարի ծրագրի եւ համեմատաբար փոքր ծավալի հակասությամբ (տես *Ա. Մադոյան, Նշվ. աշխ., էջ 230*): Իր ընտրած հերոսներին Շնորհալին հաճախ ներկայացնում է ոչ թե գործողության մեջ, այլ փառաբանում է հայրենանվեր գործերի համար կամ պախարակում վատահամբավ արարքների դեպքում: Կարծում ենք՝ այս թվարկումը եւս բխում էր ժանրի առանձնահատկություններից եւ համապատասխանում էր նրա ծրագրին ու նպատակին, որքան էլ տուժել է պոեմի գեղարվեստական կողմը:

Շնորհալին հայ գրականություն բերեց նոր կերպարներ: Նա ցանկանում էր իր կերպարների միջոցով սերունդներին տալ ռազմական-ֆիզիկական, հոգեւոր ու գիտական բազմակողմանի կրթություն: Այս ամենից անբաժան էր քրիստոնեական բարոյախոսությունը, որը եւս պակաս կարեւոր նշանակություն չուներ սերունդների դաստիարակման գործում: Հայ նշանավոր արքաների եւ հոգեւոր-մշակութային գործիչների մասին Շնորհալին խոսում է մեծ սիրով ու հիացմունքով՝ ցանկանալով համանման զգացումներ ներշնչել նաեւ ընթերցողին: Պարթեւ Արշակ Մեծը Հայաստանի գահին է բազմեցնում իր եղբորը՝ Վաղարշակին, որը հաղթում է թշնամիներին, վերականգնում թագավորությունը, մի շարք կարեւոր բարեփոխումներ անում երկրում (էջ 46).

Որոյ զօրօք բազմօք եկեալ,
Մակեդոնեանց յաղթող գտեալ,
Զարքայական գահ յօրինեալ
Եւ նախարարս հաստատեալ:
Քաղաքական օրէնս եդեալ
Եւ բարիոք կարգաւորեալ...

Պատահական չպիտի համարել այս բարեկարգումների թվարկումը. Շնորհալու ժամանակ եւս հայերը խնդիր ունեին բուն Հայաստանում վերականգնելու թագավորությունը, իսկ Կիլիկիայում պահպանելու ստեղծած անկախ իշխանությունը, կարգավորելու ինչպես քաղաքական, այնպես էլ հասարակական կյանքն ու հարաբերությունները:

Ապա Շնորհալին մեծ հպարտությամբ է ներկայացնում այն արքաներին, որոնք ոչ միայն պահպանել են հայրենի երկրի սահմանները, այլեւ ընդարձակել են դրանք: Այս դեպքում հայրենիքի պաշտպանության, հզորացման համար մղված մարտերը չեն հակասում քրիստոնեական բարոյախոսությանը: Պոեմում այդպիսի հերոսներ են Արտաշեսը, Տիգրան Միջինը, Խոսրով Արշակունին: Արտաշեսը համեմատվում է Ալեքսանդրի հետ եւ նույնիսկ նրանից առավել քաջ համարվում (էջ 48).

Քան զԱղեքսանդր վեհ եղեալ,
Պոլիկրատեայ գովաբանեալ:

Նույնիսկ հպարտությամբ է խոսում Տիգրանի մասին, որը հաղթել է հռոմեացիների զորքին, սպանել նշանավոր զորավար Կրասոսին եւ գերել Հյուրկանոսին: Իսկ Խոսրով Արշակունին, մեծաթիվ զորք գումարելով, հասել է Տիզբոն, հաղթել Արտաշիրին, նրան ստիպել փախչել մինչեւ Հնդկաստան:

«Վիպասանութեան»՝ միայն աշխարհիկ պոեմ լինելու տեսակետը հերքվում է նաեւ այն հանգամանքով, որ առաջին ընդարձակ հատվածները նվիրված են քրիստոնյա արքաներին՝ Աբգարին եւ Տրդատ Մեծին, Գրիգոր Լուսավորչին եւ նրա տոհմին: Հեղինակի անմիջականությունը, անձնական գորովալի վերաբերմունքն են զգացվում Աբգար թագավորի նկարագրում (էջ 52).

Աստ հրճուիմ ես ցնծացեալ,
Թագաւորաւս իմ պանծացեալ,
Զի քան զԹովմաս յառաջացեալ,
Զերանութիւն մարդկան բերեալ:

Ուշագրավ է Տրդատ Մեծին նվիրված հատվածը: Վերջինս պոեմի կենտրոնական կերպարն է: Պահլավունիներին չհաշված՝ ամենածավալուն բնութագիրը տրված է Տրդատ Մեծին: Այս փաստը բավականին հետաքրքրական է: Իհարկե, նախ եւ առաջ Տրդատի կերպարի հիմքում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած արքա լինելու փաստն է, բայց Տրդատի կյանքը, կերպարը շատ այլ առումներով էլ են հետաքրքրել Շնորհալուն: Վերջինս Տրդատի արտաքինի, ուժի գովքը տալիս է հոմերոսյան վիպասանությունների հետեւողությամբ եւ համեմատություններով: Շնորհալու կարեւոր դասերից մեկը հենց այստեղ է. պիտի վերագտնել այդ ուժը, քանզի այդպիսի ուժի կրող անհատը վերականգնեց հայոց պետականությունը, իր հոր գահը (էջ 63).

Առ ի քաջաց քաջ երեւեալ,
Եւ յաղթանդամ հսկայացեալ,
Ուժեղ, կարող, անյաղթ գտեալ...

Շարունակելի

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ
ԵՊՀ-ի աստվածաբանության ֆակուլտետի ասպիրանտ, ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետի մագիստրոս

Արդվի գյուղի պատմաճարտարապետական նշանավոր հուշարձանները

➥ էջ 6

* * *

Հայոց պատմությունը հարուստ է հասարակական-քաղաքական ու եկեղեցական նշանավոր այնպիսի գործիչներով, որոնք անուրանալի հետք են թողել իրենց ու հաջորդ դարաշրջանների ազգային-եկեղեցական ու կրթամշակութային կյանքում: Այդպիսի լուսապայծառ գործիչ է Հայոց Կաթողիկոս (717–728 թթ.), աստվածաբան, իմաստասեր, մատենագիր ու շարականագիր Հովհաննես Գ Օձնեցին:

Անգնահատելի է Օձնեցու դերը Հայոց Եկեղեցու ժամերգության կանոնակարգման, կանոնական իրավունքի, մատենագրության, եկեղեցաշինության մեջ:

Կաթողիկոս Հովհաննես Գ Օձնեցին վայելել է սրբակենցաղ հոգեւորականի համբավ, աչքի ընկել բազում առաքինություններով, որոնց մասին վկայում են հայ պատմիչները եւ պատմական հիշատակարանները: Իր ազգանվեր ու եկեղեցաշեն գործունեությամբ, մատենագրական բեղուն վաստակով նա խոր ակոս է թողել հայ ժողովրդի եւ Հայոց Եկեղեցու պատմության մեջ:

Կյանքի վերջին տարիներին Օձնեցին մեկուսացել է հայրենի Օձուն գյուղում, զբաղվել ուսուցչությամբ, աղոթքներով ու ճգնակեցությամբ: Երջանկահիշատակ հայրապետն իր մահկանացուն կնքել է 728 թ.: Հայսմավուրքը Հովհաննես Գ Օձնեցու հիշատակի օր է նշում ապրիլի 17-ը, ինչն էլ հիմք ընդունելով՝ Մաղաքիա արք. Օրմանյանն ապրիլի 17-ը համարում է Օձնեցու մահվան օրը: Ավանդաբար Օձնեցու թաղման վայր է նշվում Օձունից ոչ հեռու գտնվող Արդվի գյուղի Ս. Հովհաննես (Սրբանես) վանքի հյուսիսային եկեղեցու բեմին կից դամբարանը, որը հնուց ի վեր վերածվել է ուխտավայրի:



Հայ Առաքելական Եկեղեցին Հովհաննես Գ Օձնեցուն դասել է սրբերի շարքը եւ հիշատակը տոնում է Մեծ պահքի 4-րդ՝ «Տնտեսի կիրակի»-ին նախորդող շաբաթ օրը (սուրբ Հովհաննես Երուսաղեմացու, սուրբ Հովհաննես Գ Օձնեցու, սուրբ Հովհան (Հովհաննես) Որոտնեցու եւ սուրբ Գրիգոր Տաթեւացու հիշատակի օր):

Օձնեցու շուրջը հյուսված բազում ավանդազրույցները վկայում են, թե որքան մեծ ակնածանք ու հռչակ է նա վայելել ժամանակակիցների ու հետագա սերունդների շրջանում, ներկայացվել ու պաշտվել է որպես հրաշագործ սուրբ: Այդ ավանդապատումների առատությունը հուշում է Օձնեցու գործունեության եւ վաստակի գնահատման, արժեւորման չափը, որի շնորհիվ ժողովրդի հիշողության մեջ իր արժանի տեղն ունի սրբացված ազգային-եկեղեցական մեծ գործչի կերպարը:

1999 թ. «Թումանյան» հայրենակցական բարեգործական ընկերության ջանքերով Օձուն գյուղում կանգնեցվել է Հովհաննես Գ Իմաստասեր Կաթողիկոսի հոյակերտ արձանը (քանդակագործ՝ Գր. Նահապետյան):

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս Չուլջյանի նախաձեռնությամբ 2003 թ. հունիսի 3–5-ը Հաղպատում կայացել է «Ս. Հովհան Օձնեցի Հայրապետը եւ իր ժամանակը» խորագրով գիտաժողովը:

2017 թ. դեկտեմբերի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Կոմիտասյան սրահում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, տեղի է ունեցել «Հովհան Օձնեցի Իմաստասեր Կաթողիկոսը եւ նրա ժամանակը» խորագրով գիտաժողովը: Ս. Հովհան Օձնեցի Կաթողիկոսի գահակալության 1300-ամյակին նվիրված այս գիտաժողովը կազմակերպվել է Գուգարաց թեմի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Մայր Աթոռի «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանի նախաձեռնությամբ:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 15.06.2022 թ.
Տպաքանակը՝ 1225